

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9148



(4) 2

27

THE UNIVERSITY OF CHICAGO

1914

PHYSICS DEPARTMENT

CHICAGO, ILL.

RECEIVED

THE UNIVERSITY OF CHICAGO

ԻԱՔԻԱԴԻԱԱՍԻՍ ՏԱԳՕՒՄ

Կ. Կ. Կ. Կ.  
1-2

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ա. ԳԻՐԳ

ՊԱՐՏԻԶՊԱՆԸ — ՊՕԷՄՆԵՐ

ԱՄՆՆ ԻՐԱՆՈՒՆԸ ՎԵՐԱՊԱՀԻԱԾ ԹԱՐԳՄԱՆԶՈՆ

891.44  
S-12  
այ.

20 JUN 2006  
U. ԳԱԲՈՒՅԵԱՆ  
ԲՈՒ Ը 85/85  
\* ԳՐԱԴԱՐԱՆ  
19 NOV 2010

ԻԱՔԻԱԴԻԱԱՍԻՍ ՏԱԳՕՒՄ

ՊԱՐՏԻԶՊԱՆԸ

ՍԻՐՈՅ ԵՒ ԿԵԱՆՔԻ ՊՕԷՄՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՅԻՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՄԼԻԿ ԹՈՒՄԱՆԾԱՆՆԻ

ՎԻՇՆԱ ՄՈՒԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ 1922

6720


23 SEP 2013

9198



3146-48

9198



## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մեծ մասը սիրոյ եւ կեանքի պօէմների, որոնց թարգմանութիւնը ընկաւերէնից զետեղւած է էս հատորում՝ գրւած են աւելի վաղ քան կրօնական պօէմների էն շարքը, որ տպւել է “Գիտա ն ժ ա լ ի” (Յաշտերգեր) գրքիս մէջ:

Թարգմանութիւնները ըստացի չեն՝ ընազիրները երբեմն կրճատուել են, տեղտեղ էլ ազատ թարգմանել:

ՐԱԲԻՆԴՐԱՆԱԹ ՏԱԳՕՐ

## ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ

Յոյնացած ուկո, մեքենաների հնչիւնից ու շտուպից, լիացած ջուշրոթեան ու գեթոթեան սանձայրածիլի կեանքով, յոգնած ու ջքած ուզմերի ու արիւնի մեջ՝ զգած գնդակների տարափից Արեւմուտքը վերջապէս գալիս է նորից Մեծ եւ Իմաստուն Արեւելքի մօտ — մեղքերը քաւելո, սիրտը մաքրելո, հոգին սրբելո, միտքը պարզելո...

Արեւմուտքը դեռ շատ բան ունի սովորելո՝ հետադուտ անդիւնայ աւելնլ, անվիրտ ու անբարւիր սրտով, վե՛հ ամպարներ՝ հոգով ու պայծառ, անզամանդաւ մտքով Արեւելքից:



Դեռ տակաւիւն չի ցարձել արցունքը բիւր հազար մայրերի ու քոյրերի, չեն սթափուել բազում որբացած ընտանիքներ ու անտէր մնացած ծնողներ, չեն արթնացել էն ջջմորից, էն անոնելի զարհուրանքից, արհաւիրքից, որ տնեղծեց Արանց գլխին արիւարբու Արեւմուտքը չորս տարւայ ընթացքով. փոթորիկ, որ մոլեգիւն ուժ գնուածեմք արբեց, տարաւ արեւ ինչ՝ էն բարոյականութիւն, էն սէր, էն կոռչտորու, էն գրականութիւն, էն խաղաղութիւն էն Առյժ իսկ հաւատ ու յոյս:

Բայց մօտ է հսկայ վայրկեանը. էլ առաւել հոռժկու թափով, աւելի հզօր ունակութեամբ քան կարող էր լինել առանց աննայթընթաց անբարասպան համաշխարհային սպանդանոցի, աւելի կայտատ ու ժիր եռանդով Աս, էդ մեծ, վիթխարի շուռնջը, մարդու հոգու էն մտքի անխուսափելի ուղեցոյցը գալիս է սէր, խաղաղութիւն սերմանելու:

...

Զ'ցամքած արցունքն ու շարունակող ան-  
Աորմաչ պայմանները և «Ետակրանութեան» զօրա-  
ցած ուժն է, որ խանգարում են գրականութեան  
անդորր ու մեծ աշխատանքին:

Արեւմուտքի մեծ բանաստեղծ ու փիլիսոփայ  
էն Արեւելքի խորութեան, խմտտութեան մար-  
մնացում — Գանգեսի ափերի ամենակոռչտորակ  
«տորք մարդու» Բարիկորսնայթ Տագօրի առաջին  
հատորն առաջարկելով հայ հասարակութեանը՝  
մեզ սիրում էնք հառատաչ, որ մօտ սպագայում  
յոյս կ'ընծայենք երկրորդ հատորը «Գիտամծարի» —  
Յաչտ էր գէրը հեղինակի կենսագրական էն գրա-  
կան-փիլիսոփայական գործունէութեանց ընդար-  
ձակ տեսութիւնով:

Լոնդոն, 1922 թ. Օգոստոս 18

•  
•••

*ՄԻՐՈՅ ԵՒ ԿԵԱՆՔԻ ՊՕԷՄՆԵՐ*

**ԺԱՌԱՆ**

*Ողորմած եղիք ղէսի քո ծառան, տիրուհի:*

**ԹԱԳՈՒՀԻՆ**

*Ըստունելութիւնը վերջացել է եւ իմ բոլոր ծառաները ցրել են արդէն. ո՞ր ես եկել էդքան ուշ:*

**ԺԱՌԱՆ**

*Ծրք բոլորը զնում են, էն ժամանակ է իմ հերթը զաւիս. ուզում եմ ինդրել էն, ինչ որ մտում է ղեռ քո վերջին ծառայի համար:*

**ԹԱԳՈՒՀԻՆ**

*Ի՞նչ կարող ես սպասել, երբ էդքան ուշ ես եկել:*

ԺԱՌԱՆ

Նշանակիր ինձ ծաղկոցիդ հսկիչ:

ԹԱԳՈՒՆՅԻՆ

Ի՞նչ ամմտութիւն:

ԺԱՌԱՆ

Ես հրաժարուամ եմ իմ բոլոր ծառայութիւններից, տիրուհի:

Ես կ'ընդունեմ իմ սուրն ու նիզակը: Մի ուղարկիր ինձ այլեւս հեռու պալատներ, մի՛ հրամայիր ինձ նոր յաղթութիւններ անելու:

Միայն քո ծաղկոցիդ հսկիչը նշանակիր ինձ:

ԹԱԳՈՒՆՅԻՆ

Բայց պարտականութիւնդ ի՞նչ պիտի լինի:

ԺԱՌԱՆ

Պարապ օրերիդ կ'ծառայեմ, տիրուհի:

Ես կ'պահպանեմ թարմ կանաչը էն արահետի, ուր զբօսնում ես դու առաւօտեան ու քո ամին մի քայլը մահ տենչող ծաղիկները օրհնեցողութեամբ կ'դիմաւորեն:

...  
Քեզ կօրօրեմ սապտապարնի ծիւղերի մէջ եւ  
ըրիկայ մահիկը կ'տենչի տներւնների արանքից զգեստիդ  
փէշը համբուրել:

Իմնկաբոյր իւրով կ'ընենմ անկողնիդ մօտ վառող  
ծրագն ու ոտներիդ աթոռակը կ'զարդարեմ հրաշագեղ  
նկարներով ծանաւանի եւ շափրանի ներկից:

ԹԱԳՈՒՆՅԻՆ

Իւ ի՞նչ վարձատրութիւն ես ուզում դրա համար:

ԺԱՌԱՆ

Որ ինձ թոյլ տաս՝ վերցնեմ փթթող Լոտոսից էւ  
քնքոյշ ձեռներդ ու զարդարեմ ծաղկեայ ապարանջաններով,  
ներկեմ՝ ոտերիդ կոշիկները աջօկի աւ կարմիր  
հիւթով ու փոշու հատիկները, եթէ պատահմամբ կաշեմ  
քաղեմ համբոյրներով:

ԹԱԳՈՒՆՅԻՆ

Խոնդիրդ կատարած է, ծառաս, կղեր իմ ծաղկոցիս  
հսկիչը:

“Ախ, երգիչ, տևս, երեկոն մօտենում է, մագերի  
ծերմակում են:

“Ըո մինաւոր մտածմունքների ժամանակ չմն  
լտում անդրշիրիմեան աշխարհի կոչք:”

“Այո, արդէն երկոյ է,— պատասխանեց երգիչը—  
“բայց ես դեռ ականջ եմ դնում, գուցէ գիւղից ինձ  
կանչող լինի՝ թէկուզ եւ ուշ է արդէն:

“Ես հետեւում եմ՝ չմն հանդիպում արդեօք իրար  
երկու մատաղ մոլորեաձ սրտեր ու երկու զոյգ փայլա-  
տակած սիրահար աչեր չմն ինչոքի իմ երզը, որ խան-  
գարի նրանց լուծիւնն ու խօսի նրանց փոխարէն:

“Հապա ո՞վ պիտի նրանց համար կրքոտ երգեր  
հիւսի, եթէ ես նստեմ կեանքի ափին ու դիտեմ մահն  
ու անդրշիրիմեան աշխարհը:

Իրիկայ վաղորդեան աստղիկը չքամում է:

“Սարում է կամաց յուղարկաւորութեան՝ խա-  
րոյին անշշուկ գետի էն ափին:

“Գունատուող լուսնի տակ շնագայլերի վոհմակը  
ուռում է քանդած տան քակում:

“Եթէ իր տունը թողած ծամբորդի մինը գայ էստեղ  
գիշերով՝ պէտիկոր ունկընդոելու խաւարի շշուկը, ո՞վ  
պիտի նրա ականջին շշնայ կեանքի գաղտնիքները,  
եթէ ես փակեմ դռներս ու մտածեմ մահի կապանք-  
ներից ազատելու մասին:

“Ի՞նչ փոյթ, որ մագերս ծերմակում են:

“Ես միշտ նոյնքան ջանէլ եմ եւ նոյնքան ձեր,  
ինչքան էս գիւղի ամենաջանէլն ու ամենածերը:

“Ոմանք ժպտում են պարզ ու քնքոյշ, միւսների  
աչքերը կայծում են խորամանկօրէն:

“Ոմանց արցունքը ցայտում է ցերեկայ լուսին,  
միւսների արցունքը թափում է խաւարում:

“Ես պէտք եմ ամենքին, եւ ժամանակ չունեմ  
ապագայ կեանքի մասին մտածելու:

“Ես հասակակից եմ ամեն մէկին, էլ ի՞նչ փոյթ,  
որ իմ մագերս ծերմակում են:”

### III

Մի առաւօտ ուռկանս ծովը ձգեցի:

Պաւար ու խոր անդընդից ես դուրս հանեցի  
տեսքով աննման ու սքանչելի գեղեցկութեան իրեր, —  
մի քանիսը փայլում էին ժպիտի պէս, մի քանիսը շող-  
շողում էին արցունքի պէս, միւսները կարմրին էին  
տալիս նորահարսի այտերի նման:

Երբ բեռս տուն բերի՝ իմ նազելիս այգում նստած  
ծոյլ-ծոյլ պոկում էր թերթիկները ծաղկի:

Մի բռպէ տատանեցի — յետոյ դրի նրա ոտների  
տակ իմ ամբողջ որսն ու լուռ կանգնեցի:

Նա նայեց ու շնչաց՝

— Սա ի՞նչ տարօրինակ բաներ են. ես չը գիտեմ  
ինչի են պէտք զալու սրանք:

Ամօթից գլուխս կախեցի ու մտածեցի՝ —  
ճիշտ որ սքանք յարմար նւէրներ չեն նրա համար. չէ  
որ կուով չեմ խլել թշնամուց եւ ոչ էլ շուկայումս  
եմ գնել:

Ու ամբողջ գիշեր իմ նւէրները մէկը միւսի  
կտեւից փողոց նետեցի:

Առաւօտը ծամբորդներ եկան, հաւաքեցին ու  
տարան հեռու երկիրներ:

#### IV

Վայ ինձ, ճիտեղ է տունս՝ աղվկոտ շուկայի  
ծամբին:

Ամենքը իմ ծառերի մօտ են կապում բեռնած  
նաւերը:

Ամենքը, ում քէֆը տալիս է, գնում են գալիս՝  
ազատ անց կենում:

Ես նստած հետեւում եմ նրանց ու ժամանակս  
անցնում է:

Ես չեմ կարող նրանց վրնդել ու օրերս անցնում  
են էսպէս:

Գիշեր ցերեկ նրանց ոտնածայնն է իմ դրան  
մօտ:

Իզուր եմ գոռում՝ «Ես ձեզ չեմ ծանաչում»:

Նրանցից ոմանք ծանօթ են մասներիս, ոմանք  
հոտառութեանս, երակներիս արիւնը կարծես ծանա-  
չում է միւսներին, ոմանք էլ ծանօթ են երագներիս:

Ես չեմ կարող նրանց վրնդել. ես կանչում եմ  
նրանց ու խնդրում՝ «Եկէք ինձ մօտ. համեցէք, ով  
ուզում է, եկէք»:

Առաւօտեան ղօղանջում են զանգերը տաճարի:  
Նրանք գալիս են կողովները ձեռքին: Կարմիր  
են նրանց ոտները վարդի պէս: Գէմքերին խաղում է  
արշաւոյսի շողն առաջին:

Ես չեմ կարող նրանց վրնդել: Ես կանչում եմ  
նրանց ու խնդրում՝ «Եկէք իմ պարտէզը ծաղիկ քա-  
ղելու, եկէք ինձ մօտ»:

Կէսօրին հնչում է գոնգը պալատի դարպասի  
մօտ:



Զգի՛րե՛մ ինչու բոլորը թողնում են իրենց գործն  
ու հաւաքւում իմ պատի տակ:

Նրանց վարսերին ծաղիկները թօշնած են ու  
տժգոյն. նրանց սրինգների ծախը նւաղած:

Ես չեմ կարող նրանց վռնդել: Կանչում եմ  
Նրանց ու խնդրում՝ «չով է իմ ծառերի շւարի տակ,  
եկէ՛ք, քարեկամներ,»:

Գիշերը ծղրիզները ծղրտում են անտառում:

Ըն ո՛վ է էղպէս կամաց մօտենում իմ դռանն ու  
զզոյշ բախում:

Հագիւ եմ դէմքը նշմարում. ոչ մի ծպտուն  
չուրջս լողթիւն է երկնային:

Ես չեմ կարող վռնդել իմ անխօս հիւրին:

Խաւարի միջից նայում եմ նրա դէմքին ու ան-  
ցնում են ժամերն երազի:

V

Ես հանգիստ չունեմ: Կարօտ եմ էն բանին, որ  
հեռու է:

Հոգիս մորմոքւում է արջնախոյր հեռունների թէ-  
կուզ եզերքին դիպչելու փափագով:

Օ՛, վսեմ Անդրաշխարային Հեռու, օ, զիւ կանչը  
քո սրնգի:

Ա՛խ, մոռացայ, ես միշտ մոռանում եմ, որ թեւեր  
չունեմ թոփշքի համար, որ աոյաւէտ բանտարկւած  
եմ էստեղ:

Անհամբերութիւնից ես այրում եմ, քուն չունեմ.  
ես օտարական եմ էստեղ՝ օտար երկրում:

Քո շունչը շաւակի համնում է ինձ ու ներշնչում  
անհնարին յոյսեր:



Քո լագուդ մօտ է սրտիս՝ որպէս իմը:  
Օ՛, Դո՛ւ, Հեռաւոր Բաղձալի Որո՞նում, ճ, զիւ կանչը  
քո սրնգի:

Ա՛խ, մոռացայ, ես միշտ մոռանում եմ, որ ան-  
ծանօթ եմ էնտևիլի ծամբին, որ չունեմ թեւաւոր ձի:

Մոլորեւել եմ ես. օտար եմ ես իմ իսկ սրտում:  
Տառապանքի ժամին, արեւի թխալոտ բոցի մէջ,  
դու հսկայ տեսիլքի պէս ելնում ես երկնքի լագուդը...

Օ՛, Հեռաւորագոյն Նպատակ, ճ, զիւ կանչը  
քո սրնգի:

Ա՛խ, մոռացայ, ես միշտ մոռանում եմ, որ փակ  
են բոլոր դռները էն տան, որտեղ ես ապրում եմ մենակ:

...

## VI

Սենեակի վանդակում տանջում էր ըանտար-  
կած թռչունը՝ ազատը ծախրում էր անտառում:

Հառաւ ժամ ու Նրանց հանդիպեցին իրար:  
Էդպէս էր ծակատազրի հրամանը:

— Ծ՛կ, սիրելիս, միասին թռչե՛նք անտառ —  
կանչում է ազատ թռչունը:

— Արի ինձ մօտ, էս վանդակում ապրե՛նք միա-  
սին — ծըլծըլում է վանդակի գերին:

— Չողապատ քո վանդակում թեւերն իսկ շոկել  
անհնար է -- պատասխանում է թռչունն անտառի:

— Ա՛խ, ծըլում է վանդակի գերին, երկնքում  
ծող շկայ ինձ համար, որ Նստեմ:

— Ծրզիք, սիրելիս, անտառի երգերից — աղա-  
չում է ազատ թռչունը:

“

— Նստիր իմ կողքին՝ ես կ'սովորեցնեմ՝ քեզ երգել էնպէս՝ ինչպէս ինձ են սովորեցրել -- պատասխանում է վանդակի գերին:

— Ա՛խ, ո՛չ, ո՛չ, երբէք չի կարելի սովորելով երգել -- ժշում է անտառի թռչունը:

— Չայ ինձ, ես անտառի երգերը չգիտեմ -- ծըլում է գերին:

Անհամբեր կրքից բոցավառում է նրանց սէրը, բայց թեև թեև նրանք երբէք չեն թռչելու:

Ու նայում են միմեանց թռչունները վանդակի ծողերի արանքից՝ բայց զուր են աշխատում հասկանալ իրար:

Տագնապալի, կրքոտ տենչով թրթռում են նրանք, թեև երբ թվարտալով հառաչում են՝ «աւելի մօտ, սիրելիս, մօտ եկ,»:

— Անհար է, վախում եմ քո վանդակի փակ դռներից -- ախ է քաշում թռչունն անտառի:

Ու ցաւով ծըլում է վանդակի գերին՝

— Աւանդ. թեև երբ ուժասպառ են ու մեռած:»

## VII

Ծս ինչպէս կարող եմ էս առաւօտ աշխատել, մայրիկ, երիտասարդ իշխանը պիտի անցնի մեր դռան մօտից:

Ասւ, ինչպէս յարդարեմ վարենքս, ո՞ր զգեստս հագնեմ:

Մի նայիւ, մայրիկ, ինձ էդպէս զարմանքով:

Ծս լաւ գիտեմ՝ նա հայեացք էլ չի ձգի պատուհանիս, մի ակնթարթում կանհետանայ աչքից. միայն սրինգների նւաղոտ երգը հառաչով կ'լսուի հեռուից

Բայց, մայրիկ, երիտասարդ իշխանը կանցնի մեր դռան մօտից՝ ես կ'հագնեմ ամենալաւ զգեստս:

Մայրիկ, երիտասարդ իշխանը անցաւ մեր դռան մօտից ու վաղորդեամ շողերով ողողուած փայլում էր նրա կտորը գեղաշուք:

Ես ձգեցի դէմքիս քօղը, աղկեցի վզիս սուտակի մանեակն ու նետեցի ճամբէն՝ նրա առաջ:

Մի՛ նայի ինձ էդպէս զարմանքով, մայրիկ:

Ես գիտեմ, չվերցրեց մանեակը. նա ընկաւ անիւնների տակ եւ միայն կարմիր քիծ մնաց ճամբում. ոչ որ չը գիտէ, որ նրա համար նետեցի էս նուէրը:

Սակայն երիտասարդ իշխանն անցաւ մեր դռան մօտից ու իմ գանձը կրծքիցս ես նրա ոտների տակ նետեցի:

3146-48

### VIII

Ես զարթնեցի այգուն կանուխ՝ հէնց առաջին հաւրերի հետ, երբ անկողնիս մօտ ծրագը հանգաւ:

Նստեցի քաց պատուհանիս առաջ թափած վարսերով թարմ ապարօջը գլխիս:

Առաւօտեան վարդազօծ աղջամուղջին՝ անցնում էր մօտ ծամբով ջահէլ ծամբորդը:

Նա վզին մարգարտէ մանեակ ունէր եւ արեւի շողերով շտապիում էր նրա պսակը արփիազեղ: Իմ դռան մօտ կանգ առաւ նա եւ կրքոտ հարցրեց՝ «հըր է նա»:

Օ, ամձթ, չկարողացայ ասել՝ «նա-ես եմ», չսհէլ ծամբորդ, նա-ես եմ»:

Իրիկնամուտ էր, ծրագը չէր վառած:  
Մոռացութեան մէջ մագերս էի հիւսում:



Մայր մոնտոյ արեւի վերջին ծառագայթների  
արոյր շողերին՝ հառաչակուլ մտեցաւ գեղազան կառ-  
քով ջահէլ ծամբորդը:

Փրփուր էր կսփում ձիւնների երախից ու փոշոտ  
էր նրա հագուստն ամբողջ:

Իմ դրան մօտ նա իջաւ կառքից եւ յոգնած ու  
վհատ հարցրեց թոյլ ձայնով՝ «հէր է նա,,:

Օ, ամեթ, չկարողացայ ասել — «նա՛ ես եմ»,  
յոգնած ծամբորդ, նա՛ ես եմ,,:

Ահա գիշերն սպրիլի: Ծրագն այրում է իմ սե-  
նեակում:

Մեղմ՝ փչում է հարաւի շունչը: Ծեծող խօսնակ  
թութակը քնած է իր վանդակում:

Բազմնրանգ է զգեստս, որպէս խատուտիկ վիզը սի-  
րամարգի ու ծածկոցս կանաչ, ինչպէս սէզը ցօղաթում:

Ես նստած եմ՝ յատակի վրայ պատուհանիս մօտ  
ու դիտում եմ՝ դատարկ ծամբան:

Եւ ամբողջ մտք գիշեր ես շնչում եմ՝ ինձ ու ինձ  
ու անվերջ փսփսում՝ «նա-եւ եմ», յուսահատ ծամբորդ,  
նա-եւ եմ,,:

## IX

Գիշերը՝ երբ ես մենակ գնում եմ ժամադրու-  
թեան — քամին չի շշում, թռչունները չեն երգում.  
կանգնած են տները ծամփու ափերին լուծեան մէջ:

Միշտ իմ ոտերիս ապարանջաններն են, որ  
ամեն քայլափոխում գնում են եւ ես ամաչում եմ:

Երբ ես նստում եմ իմ պատշգամբում ու լսո-  
ղութիւնս հսկում է նրա քայլերի ձայնին, ծառ ու տերեւ  
չեն սոււում, գետի ջուրը լուռ է ու անշարժ ինչպէս  
թուրը քնած պահակի ծնկներին:

Միշտ իմ սիրտս է, որ կեկառ քաքախում է,  
ինչպէս հանգստացնում նրան — չգիտեմ:

Ծրբ գալիս է սիրելիս ու նստում կողքիս՝ թրթռում է սիրտս, աչքերս կախ են ընկնում. խաւարտչին է դառնում գիշերը. քամին մարում է ծրագն ու ամպերը շղարշով սքողում են աստղերին:

Միշտ իմ կրծքիս արփիացայտ գոհար քարն է, որ լոյս է նշուլում ու այրում կուրծքս, ննչպէս թագցնեմ նրան — չգիտեմ:

## X

Թող գործը, հարս, տես, հիւր է եկել:  
Լսո՞ւմ ես՝ ինչ զգուշութեամբ նա շարժում է  
դուան փակը:

Տես, չը լինի թէ՛ նրան դիմաւորելիս ոտերին  
օղերը զնգան կամ քայլածքը շտապ ու շփոթ լինի:  
Թող գործը, հարս, հիւր է եկել իրիկայ ժամին:

Մի վախի, հարս, էդ չար քամու շունչը չէ. դա  
լքիւ լուսինն է ապրիլ գիշերայ: Գունատ են սոււերները  
քակում ու պայծառ է պարզ երկինքը մեր գլխին:

Վերցրու քօղը՝ թէ՛ նրեսդ ես քաշելու. ծրագով  
մօտեցիր դուանը՝ եթէ վախում ես:

Մի վախի, հարս, էն չար քամու շունչը չէ:

Ձէն մի հանի, եթէ ամաշում՝ ես, նրան ընդունելիս դոան մի կողմն կաց: Եթէ նա քեզ քան հարցնի՝ դու ուզես-կարող ես լուռ աչքերդ կախ զցել:

Տես, օղակներդ չգնգամ՝ երբ քրազը ձեռիդ նրան ներս հրաւիրես: Հետը մի՛ խօսա, եթէ ամաշում՝ ես:

ԶՎերջացրինք քո գործը, հարս: Տես, այ հիւրը:

Մինթէ գոմի քրազը չես վառել:

Դեռ չես պատրաստել զոհարերութեան զամբիւնն իրիկայ ծիսակատարութեան համար:

Խորնէ ես վարսերիդ սանրաձքում կարմիր նշանը բախտի. հագնում՞ ես գիշերայ համար:

Օ, հարս, լսում՝ ես, հիւրը եկել է:

Թող գործդ:

## XI

Ե՛կ, ինչպէս որ կաս, էլ ժամանակ մի կորցնի զուրելուդ վրայ: Թող լինես հերարձակ — թափաճ վարսերով՝ թող սանրաձքդ լինի անկարգ ու կորսածիդ ժապաւէնները քանդած՝ ինչ փոյթ:

Ե՛կ ինչպէս որ կաս, էլ ժամանակ մի կորցնի զուրելուդ վրայ:

Արի կանաչներով, արի, շտապիր:

Թող սէզերի ցօղը քո երանգանկար ոտերիդ ներկը իջեցնի կամ թէկուզ ոտերիդ բոժոժիկների օղակները բացեն ու մանեակիդ մարգարիտները թափւեն՝ ուշ մի դարձնի:

Արի կանաչներով, արի, շտապիր:

Տեսնո՞ւմ ես ամպերը ինչպէս են ծածկում երկինքը:

Հեռաւոր ծովի ծանծաղուտից կոռնկների երամու իջել է գետափին ու քմահաճ քամին քարկ ուժգնութեամբ սլանում է դաշտի վրայով:

Նախիրը խրանած դէպի գիւղի ախտոններն է վազում:

Տեսնո՞ւմ ես ամպերը ինչպէս են ծածկում երկինքը:

Դու զուր ես վառում սեղանիդ փոքրիկ ծրագը — բոցը կերերայ ու քամին կ'մարի:

Եւ ո՞վ կ'նկատի, որ քո արտեւանունքները չեն մրտուել ծրագի մարած պատրոյկից: Չէ՞ որ ծաւի աչերդ աւելի թուխ են, քան ամպերը փոթորիկի:

Զուր ես վառում սեղանիդ փոքրիկ ծրագը՝ բոցը կերերայ ու քամին կը մարի:

Ե՛կ, ինչպէս որ կաս, էլ ժամանակ մի կորցնի հագնելու վրայ:

Հոգ չէ, որ պսակը չի հիւսւած կամ՝ ապարանջանի շղթան չի կապւում — թող էդպէս մտա:

Երկիրը բոլորովին ծածկել է ամպերով՝ ուշ է արդէն: Ե՛կ ինչպէս որ կաս, էլ ժամանակ մի կորցնի գուրեւորը վրայ:

## XII

Եթէ օրւայ հոգսերիդ ժամին ուզես լցնել քո սափորը՝ արի, իմ լծակի մօտ արի:

Ջրի ալիքները կ'զրկեն ոտներդ ու թոթովելով իրենց գաղտնիքը կ'աւատմնս քեզ:

Յորդ անձրեւի սոււերն ընկել է աւազներին ևւ ամպերը մտո կախւել են ծառերի գլխին՝ ծիշտ էնալէս, ինչպէս գողզ վարսերիդ պուրակները քո աչերիդ վրայ:

Ես շատ լաւ գիտեմ քո քայլերիդ չափը -- սիրոս գարկում է՝ նրանց հետ համաչափ:

Արի, օ, արի իմ լծակի մօտ, եթէ սափորդ լցնել ես ուզում:

Եթէ ուզում ես լինել պարսալ՝ սափորդ գցես լիճը, որ լողայ ու ինքդ էլ նստես ափին՝ անհոգ ու անդարդ՝ արի, արի իմ լծակի մօտ:

Միզաքեր լամշերը կորած են կանաչների մէջ, իսկ դաշտի ծաղկունք թիւ-համար չունին:

Քո թուխ ծաւի աչերից դուրս կ'ծախսեն հոգսերդ՝ կնչպէս թռչունները քներից:

Ու շղարշէ ծածկոցդ կընկնի ոտներիդ:

Արի, օ, արի իմ լծակի մօտ, եթէ ուզում ես պարսալ նստել:

Երբ յոգնած քո խաղերից ուզենաս ջուրը սուզել՝ նկ, նկ իմ լծակիս մօտ:

Թող քո կապուտ շղարշը մնայ աւագի վրայ:

Կապուտ ջրերը քեզ կ'սքողեն ու կ'ծածկեն: Վերնաճեմ ալիքները կ'ըբարձրանան վիզդ համըուրելու ևւ ակամջիդ թաքուն խօսքեր շշնջալու:

Եկ, օ, նկ իմ լծակիս մօտ, երբ ուզենաս ջուրը սուզել:



Եթէ յանկարծ ցնորես ու վազես դէպի մահը՝  
արի, արի իմ լծակիս մօտ:

Զով է նա, անդնդախոր ու անհուն:

Մթին է, մռայլ՝ աներազ քնի պէս:

Ինտեղ՝ նրա անդունդում՝ զիշեր ցերեկ մին է,  
իսկ երգերը՝ լուրթին:

Ե՛կ, եկ իմ լծակիս մօտ, եթէ դու մահաւան գիրկն  
ընկնելու լինես:

### XIII

Ես ոչինչ չ'իմդրեցի. միայն անտառի մօտ՝ ծառի  
ետեւում՝ կանգնած էի:

Աղջամուղը չէր անցել. արշալոյսի աշերում  
երեւում էր դեռ օրւայ խոնջութիւնը եւ օդը խոնաւ էր  
տակաւին:

Շաղոտ սէզերի ծոյլ բոյրը շիթ առ շիթ կախ էր  
ընկած նուրբ մշուշի մէջ՝ երկրի վրայ:

Կարագի պէս քնքոյշ ու թարմ ձեռներով դու կով  
էիր կթում՝ բանանի ծառի տակ:

Ու ես անշարժ դեռ կանգնած էի:

Ես ծպտուն չ'հանեցի: Ին անտես հաւքն էր  
երգում ծմակում:

Մանգօստէնի ծառը սփռել էր իր ծաղիկները  
գիւղի ծամբին ու մեղուները խաժամուժ մէկը միւսի  
հտեւից բզզալով սլանում էին:

Լճի մօտ Շիվայի տաճարի դարպասները բաց-  
ւեցին ու երկրպագուն սկսեց կարդալ իր աղօթքները:

Կովկիթը ծնկներին մէջ բռնած դու կով էիր  
կթում:

Ես կանգնած էի իմ դասարկ թասով:

Եւ առաջ չեկայ՝ չ'մօտեցայ քեզ:

Երկինքը զարթեց տաճարի գոնգի ձայնից:

Հօտն արօտ բշեցին ու փոշին ելաւ ծամբու վրայ:

Առից վերադարձան կանայք կկկացող սափոր-  
ները ազդերին բռնած:

Քո ապարանջանները զնգացին ու կովկիթի  
ափերն ելաւ փրփուրը ձիւնաթոյր:

Առաւօտն անցաւ, իսկ ես քեզ չ'մօտեցայ:

#### XIV

Թէպէտ եւ կէսօրն անց էր ու քամբուկի ծիւղերն  
աղմկում էին քամուց՝ չ'գիտեմ ինչու ես քայլում էի  
ծամբով:

Թեքող սաւերներն իրենց երկար թելերը սլար-  
զելով փախչող լոյսի ոտներն էին ընկնում:

Քեօյլիները յոգնել նն երգելուց:

Ես քայլում էի ծամբով — ինքս էլ չ'գիտեմ՝ ինչու:

Սաղարթակիտ ծառի հովանու տակ գետի ափին  
է խրճիթը:

Մի ինչ որ կին զբաղւած է իր գործով ու նրա  
ապարանջանների զնգոցը երաժշտութեամբ էր լցրել  
էդ անկիւնը:

Ես կանգ առայ էդ խրճիթի մօտ՝ ինքս էլ չ'գի-  
տեմ — ինչու:

Էս նեղ օճապտոյտ ծամբան կտրում է մանա-  
նեկի անթիւ դաշտեր ու մանգօի անհամար պուրակներ:

Նա անցնում է զիւղի տաճարի եւ գետափնեայ  
շուկայի կողքով:

Ես կանգ առայ էդ խրճիթի մօտ — ինքս էլ  
չգիտեմ՝ ինչու:

Տարիներ առաջ մարտի հողմաշունչ մի օր գար-  
նան թոթովանքը թախծոտ էր ու մանգօի ծաղկունք  
թափւում էին փոշոտ գետնին:

Ծփծփուն ջուրը յորձանքով ծարս էր լինում ու լի-  
զում գետափի սանդղակտի վրայ մոռացւած պղնձէ ամանը:

Ես մտածում էի էդ օրւայ՝ մարտի հողմավար  
օրւայ մասին — ինքս էլ չգիտեմ՝ ինչու:

Սոււերները խորանում են ու նախիրը տուն է  
դառնում:

Մենակ դաշտերում գորշացաւ լոյսն ու զիւղա-  
ցիները գետափիս սպասում են լաստանաւին:

Հանդարտ, կամացուկ ես տուն եմ դառնում —  
ինքս էլ չգիտեմ՝ ինչու:

## XV

Վազում եմ՝ ինչպէս մթին ծմակում սլացող  
մշկեղջերուն իր բոյրից խելքամաղ եղած:

Էս գիշերը՝ ծաղկափթիթ միջմայիսեան գիշեր է,  
իսկ թեթեւ քամին՝ հարաւի գեփիւող:

Ես կորցնում եմ ծամբէն՝ շար միւրրւում.  
փնտրում եմ էն, որ չեմ գտնի ու գտնում եմ էն, որ  
չեմ փնտրում:

Իմ էս ցանկութիւնս դուրս է թռչում սրտիս  
խորքիցն ու կաքաւում իմ առաջ:

Ճախրում է շողացող տեսիլը:

Ես ուզում եմ սեղմել նրան զրկիս, իսկ նա  
խուսափում է ու շեղում ինձ ծամբից:

Փնտրում եմ էն՝ որ չեմ գտնի, ու գտնում եմ  
էն՝ որ չեմ փնտրում:

XVI

Ձեռները դիպչում են ձեռներին, աչքերը սուզ-  
ւում աչքերում՝ էսպէս է սկսում մեր սրտերի պատ-  
միւթիւնը:

Մարտի գիշերը ողորում է լուսնի լուսով, օղբ  
հարբած խէննու անուշ ըուրմունքից, իմ սրինգը  
ընկած է գետնին, իսկ քո ծաղկեայ ասպարօջը դեռ չի  
հիւսւած:

Իմ ու քո մէջ սէրը պարզ է երգի պէս:

Քո քրքումի ծածկոցն արբեցնում է իմ աչքերը:  
Յասմիկի պսակը, որ դու հիւսել ես ինձ համար՝  
որպէս գովք ու մեծարանք՝ թրթռեցնում է սիրտս:

Դա խաղ է, մերձեցման ու խուսափման, յան-  
կարձ շողացող ու կրկին չքացող խաղ, թեթեւ ժպիտի

ու թոյլ երկչոտութեան՝ մի ասպարդին, մեղուշ պայ-  
քար:

Իմ ու քո մէջ սէրը պարզ է երգի պէս:

Ձկայ ոչ մի զաղտնիքներկայից դուրս, ոչ մի թիւ  
անհասանելուն, ոչ ստուեր թազնուած հիացմունքի  
հաւելում եւ ոչ էլ թափառումներ՝ խաւարի խորքերում:

Իմ ու քո մէջ սէրը պարզ է երգի պէս:

Խօսքերից մենք չենք անցնում յաւերժ լութեան  
ու դատարկութեան մէջ ձեռքներս չենք մեկնում էն  
բանին, որից յոյս չ'կայ:

Ըն, ինչ որ տալիս ենք ու ստանում, էն էլ մեզ  
հերիք է: Մենք վայելքի ժամին հրճանքից լիացած  
չ'մտնեցանք վերջին սահմանին, որ տառապանքի գինին  
չ'ցայտէր:

Իմ ու քո մէջ սէրը պարզ է երգի պէս:

## XVII

Երգում է զեղին թռչունը նրանց ծառի վրայ ու ստիպում է՝ սիրտս կաքաւի հաճոյքից:

Երկուսս էլ ապրում ենք մի գիւղում եւ դա է բախտի մեր բաժինը:

Նրա սիրած երկու գառնուկները գալիս են մեր այգին՝ ծառերի շւարի տակ արածում:

Երբ նրանք ընկնում են մեր գարու արտը՝ ես նրանց գիրկս եմ առնում:

Մեր գիւղին ասում են Բանջանա, մեր գետը կոչւում է Անջանա:

Մնց են ինձ կանչում՝ գիտէ ողջ գիւղը, իսկ նրա անունն է Ռանջանա:

Մեր տնից նրանց տուն՝ մի արտ է միայն:  
Մեղունները, որ պարսեւ են մեր ծառերին՝ մեղրը հաւաքում են նրանց պուրակում:

Նրանց կամրջից ջուրն ընկած ծաղիկները գետի հոսանքը բերում է էն կողմը՝ ուր մենք ենք լողանում:

Նրանց դաշտերից կիւսմայի չորացրած ծաղիկները կողովներով վաճառում են մեր շուկայում:

Մեր գիւղին ասում են Բանջանա, մեր գետը կոչւում է Անջանա:

Մնց են ինձ կանչում՝ գիտէ ողջ գիւղը, իսկ նրա անունն է Ռանջանա:

Նրանց տուն վազող կաճանը Մանգօի ծաղկունք է բուրում՝ գարնանը:

Երբ նրանց վուշը հասնում է հնձելուն՝ մեր դաշտում կանեփն է ծաղկում:

Աստղերը, որ ժպտում են նրանց տնակին՝ նոյն առկայծումս էլ մեզ են դրկում:

Անօրեւը, որ նրանց ջրամբարներն է լցնում՝ մեր  
կաղա մի անտառին հրճեանք է քերում:

Մեր գիւղին ասում են Բանջանա, մեր գետը  
կոչում է Անջանա:

Մնց են ինձ կանչում՝ գիտէ ողջ գիւղը, իսկ նրա  
անունն է Ռանջանա:

## XVIII

Երբ երկու քոյր գնում են ջրի՝ նրանք ժպտալով  
են մտնում էս տեղին:

Երեւի նրանք գիտեն, որ ամեն անգամ մէկը լուռ  
կանգնած է ծառերի ետեւը՝ երբ իրենք ջրի են գնում:

Եւ երկու քոյր փսփսում են իրար մէջ՝ երբ էս  
տեղը անցնում են:

Երեւի նրանք իմացել են էն մարդու գաղտնիքը,  
որ ամեն անգամ լուռ կանգնած է ծառերի ետեւը՝ երբ  
իրենք ջրի են գնում:

Յանկարծ թեքում են նրանց սափորներն ու  
ջուրը թափում է՝ երբ նրանք հասնում են էս տեղին:

Երեւի գլխի ընկան նրանք, որ ուժգին է բաբախում էն մարդու սիրտը, որ ամէն անգամ լուռ կանգնած է ծառերի ետեւը՝ երբ իրենք ջրի են գնում:

Եւ երկու քոյր նայում են իրար ու ծիծաղում՝ երբ մօտենում են էս տեղին:

Նոյն ծիծաղն է լսում նրանց արագընթաց քայլերում եւ ամեն ինչ տակն ու վրայ է անում էն մարդու գլխում, որ ամեն անգամ լուռ կանգնած է ծառերի ետեւը՝ երբ իրենք ջրի են գնում:

## XIX

Դու անցնում էիր գետափնեայ շաւիղով ւերը սափորն ազդրիդ:

Ի՞նչու դու յանկարծ արագօրէն շուռ եկար ու հայնացք նետեցիր ինձ վրայ քո ծածամուռ ծածկոցիդ արանցից:

Մի՞թան միջից շողշողացող էր հայնացքը հասաւ ինձ էն գեփիւտի շման, որ սառսուռ է առաջ ընդում ու ծփանցով ծածկելով ջուրը՝ կորչում է փեղի ստեւընեւրում:

Նա հասաւ ինձ, որպէս զիշերայ թռչունը, որ յանկարծ մուտ սենեակ ընկնելով մի լուսամուտից՝ միւսից իսկոյն դուրս է սլանում շիշտակի ու կորչում զիշերայ մէջ:

Դու թաքնւած ես աստղի պէս բլուրների ետե-  
ում, իսկ ես անցորդ — ծամբու վրայ:

Բայց ինչու դու մի վայրկեան կանգ առար ու  
ծածկոցիդ արանքից ակնարկ նետեցիր՝ երբ անցնում  
էիր գետափնեայ շաւիղով լիքը սափորն ազդրիդ:

## XX

Ամեն օր նա գալիս է ու գնում հեռու: Ընկնը,  
գնա եւ իմ վարսերից ծաղիկ տուէ նրան:

Եթէ նա հարցնի՝ ո՞վ է ուղարկել, աղաչում եմ,  
չտաս իմ անունը, չէ՛ որ նա միայն գալիս է ու գնում  
հեռու:

Նա նստում է ծառի տակ՝ գետնին: Ընկեք, փոխը  
էնտեղ անկողին ծաղիկներից ու տերեւներից:

Նրա աչերը թախծոտ են ու թախիծ են բերում  
սրտիս:

Թէ՛ ինչ կայ իր հոգում՝ չե՛ն ասիւ. նա միայն  
գալիս է ու գնում՝ հեռու:



XXI

Ի՞նչ է մտածել էս պատանի օտարականը, որ վաղ լուսաբացին իմ դուռն է եկել:

Ներս ու դուրս անելիս՝ ես անցնում եմ նրա մօտով ու չեմ կարողանում աչքս հեռացնել նրա դէմքից:

Խօսեմ՝ նրա հետ, թէ լուռ կենամ՝ չ'զիտեմ:

Ի՞նչ է մտածել սա, որ իմ դուռն է եկել:

Մոայլ են ամպոտ զիշերները յուլիսի. գունատ է լազուր երկինքը աշնան, գարնան օրերը հանգիստ չունեն հարաւի քամուց:

Եւ նրա երգերը հնչում են միշտ նոր եղանակով:

Ես թողնում եմ աշխատանքս ու մտախուռը մթեցնում, շմիրում է աչերս:

Ի՞նչ է մտածել սա, որ իմ դուռն է եկել:

XXII

Երբ նա շտապ քայլերով անցաւ իմ կողքից՝ զգեստի ծայրը շոյեց ինձ:

Փչեց յանկարծ գարնան տաք շունչը հոգու անձանօթ կղզուց:

Դողացող ու թուլուռն շոյուճի երեքող ալիքն անցաւ իմ մարմնով ու չքացաւ վայրկենապէս՝ ինչպէս քամու քերամն ընկած ծաղկի թերթիկ:

Նա սիրաս մտաւ՝ որպէս թրթիռը նրա մարմնի, որպէս շշնջիւնը նրա սրտի:

XXIII

Ի՞նչ ես նստել էստեղ ու ապարանջաններդ  
գնդացնում հեղզ ու պարապ խաղ անելով:

Լցրիւ սափորդ: Տուն գնալուդ ժամանակն է:

Ի՞նչ ես ձեռքերով ջուրը ծղրփում ու մէկ էլ  
ընդհատելով շեշտակի հայեացք ձգում ծամբու վրայ.  
Ո՞ւմն ես սպասում հեղզ ու պարապ խաղ անելով:

Լցրիւ սափորդ. գնա՛ տուն:

Առաւօտի ժամերն անցնում են ու հոսում է ջուրը  
պղտոր:

Ալիքները ծիծաղում են ու շնչում իրար հեղզ  
ու պարապ խաղ անելով:

Է՛նտեղ՝ երկնքի ափին — հեռու մարգագետնի՝  
վրայ կուտակել են թափառական ամպերը:

Նրանք կանգ են առել, նայում են դէմքիդ ու  
ժպտում հեղզ ու պարապ խաղ անելով:

Լցրիւ սափորդ. գնա՛ տուն:

XXIV

Մի ծածկիւ սրտիդ զաղտնիքը, մտերիմ ընկեր:  
Յայտնիր ինձ, թաքուն միայն ինձ ասա:

Զէ որ դու ժպտում ես լուռ ու մեղմամուշ՝ ասա  
ինձ էւ շնչաւով կամացուկ՝ սիրտս կ'ըսի եւ ոչ ականջ-  
ներս:

Գիշեր է խորն ու խաւարտչին, տունն անձայն,  
հաւքերի բները ընկղմւած քնի մէջ՝ պարուրւած նրազով:

Յայտնիր ինձ, քո զսպած արցունքներով ու  
ժպտով, քո մեղուշ ամօթով ու ցաւով պատմի՛ր ինձ  
սրտիդ զաղտնիքը, մտերիմ ընկեր:

XXV

— Մօտ եկ, պատանի, ծիշան ասա մեզ, ինչո՞ւ  
են աչքերդ խառնւած:

— Զգիտեմ էն ի՞նչ գինի էր վայրի կակաչից  
պատրաստած, որ ես խմեցի. նրանից է աչքերս խառ-  
նուել:

— Օ, ամօթ:

— Ի՞նչ անենք. մարդ կայ իմաստուն է, մարդ  
կայ հասարակ. մարդ կայ զգոյշ է, մարդ կայ եւ ան-  
հոգ: Աչեր կան ժպտուն, աչեր կան լալկան — բայց  
իմոնք խառնուած են:

— Պատանի. ինչո՞ւ ես անշարժ կանգնել ծառի  
շւարճում:

— Ուժասուլառ են լինում ոտքերս սրտիս ծան-  
րութեան տակ, ահա եւ կանգնած եմ ես անշարժ —  
ստուերում:

— Օ, ամօթ:

— Դ՞նչ անենք, որն առաջ է գնում, որք՝ ետ  
մտում. ոմանք ազատ են, միւսները շղթայուած, իսկ իմ  
ոտքերս տկարանում են սրտիս ծանրութեան տակ:

## XXVI

— Միայն ձեռքերիդ յօժարակամ պարզեւներն  
եմ վարցնում. էլ ոչինչ չեմ ուզում:

— Ծանաչում եմ ձեզ, սուս ու փուս մուրացիկ-  
ներիդ, դու ուրախութեամբ կաղերսես ամենից՝ ո՞վ ինչ  
որ ունի:

— Եթէ գտնուէր ինձ համար ծաղիկ, ես նրան  
սրտումս կ'աւանդէի:

— Իսկ եթէ փշոտ:

— Ինչ էլ կընդունեմ:

— Գիտեմ, գիտեմ ձեզ, սուս ու փուս մուրա-  
ցիկներիդ, դու ուրախութեամբ կաղերսես ամենից՝ ո՞վ  
ինչ որ ունի:

— Եթէ գէթ մի սնգամ սիրագեղ աչերովը նայես  
ինձ վրայ՝ դա կը դարձնի իմ կեանքը մեղուշ եւ մասից  
յետոյ:

— Իսկ եթէ տանջող հայեացքով:

— Թող նա խոցի սիրտս:

— Ծանաչում եմ ձեզ, սուս ու փուս մուրացիկ-  
ներին, դու ուրախութեամբ կաղերսես ամենից՝ սկիւնչ  
որ ունի:

## XXVII

— Պաշտիր սէրը, հաւատան նրբն եթէ մինչեւ իսկ  
քեզ վիշտ քերի:

— Զո սիրտը մի ծածկիլ:

— Ախ, ո՛չ, ընկեր, մութն են խօսքերը, քեզ չեմ  
հասկանում:

— Սիրտը, սիրելիս, միայն նրա համար է, որ  
ձուլենք երգերին եւ արցունքներին:

— Ախ, ո՛չ, ընկեր, մութն են խօսքերը, քեզ չեմ  
հասկանում:

— Յարատևել չէ ուրախութիւնը՝ ցօղի կայլակի  
պէս նա մոռնում է ժպտալով, իսկ վիշտն ուժեղ է ու  
կայուն:

Թող քո աչերում աւրի սէրը թախծալի:

— Ա՛խ, ոչ, ընկեր, մութն են խօսքերդ, քեզ չեմ  
հասկանում:

— Արեւի ճառագայթներից լոտոսը փթթում է ու  
կորցնում բոլորը, ինչ որ ունի եւ չի ուզում մնալ չքա-  
ցուած ձմեռուայ յաւէրժ մշուշում:

— Ա՛խ, ո՛չ, ընկեր, մութն են խօսքերդ, քեզ չեմ  
հասկանում:

## XXVIII

Թախիծն է պատել հարցական աչերի:

Նրանք ուզում են մտքերիս խորքերը թափան-  
ցել, ինչպէս լուսինը, որ տեսչում է ծովի անդունդը  
սուզելի՛ խորութիւնն իմանալու:

Ես բացել եմ քո առաջ իմ կեանքը մի ծայրից  
միւսը ու, տես, չկայ ոչ մի գաղտնիք, ոչինչ չի թաք-  
ցրած: Ահա՛ թէ ինչու դու ինձ չես ծանաչում:

Եթէ սա լինէր մի թանկագին քար՝ ես հարիւր  
մաս կանէի եւ ուրունք կ'շարէի, որ քո վիզը պարուրէր:  
Եթէ սա լինէր խնկաբոյր ծաղիկ — նուրբ ու  
սիրուն — ես կ'բաղէի, որ նրանով քո վարսերը զար-  
դարեմ:

Սա — սիրտ է, սիրելիս: Ո՛ւր է նրա սկիզբն ու  
վերջը, ուր է նրա յատակը:

Դու չգիտես էս թագաւորութեան սահմանները,  
թէպէտ եւ դո՛ւ ես նրա թագուհին:

Եթէ դա լինէր միայն վայելքի վայրկեան՝ կը  
ծաղկէր պայծառ ժպիտով եւ դու մի ակնթարթում կա-  
րող էիր տեսնել նրան ու կարդալ:

Եթէ դա լինէր սոսկ վիշտ՝ բիւրեղ արցունքների  
պէս կ'ցայտէր, առանց խորագոյն գաղտնիքը պարզող  
խօսքերի:

Դա սէր է, սիրելիս:

Անսահման են նրա վայելքներն ու վշտերը եւ  
անհասնում նրա կարիքն ու հարստութիւնը:

Նա մտ է քեզ, հնչալէս քո կեանքը, բայց դու  
երբէք նրան չես հասկանայ ամբողջովին:

## XXIX

Աստ՛ ինձ, սիրելիս. խօսքով պատմիր է՛ն՝ որ  
երգում էիր:

Խաւարչտին գիշեր է: Ասողերը կորել են ամպերի  
մէջ: Զամին ոռնում է ծմակում:

Ես կարծակեմ՝ վարսերս: Իմ կապուտ շլաքշը  
կ'սքողի ինձ գիշերի պէս:

Ես կրօքիս կ'սեղմեմ՝ քո գլուխն ու անուշ մննու-  
թեան մէջ սրտիդ գաղտնիքը թոթովիր:

Ես կ'փակեմ՝ աչերս ու կ'լսեմ: Ես չեմ՝ նայի քո  
դէմքին:

Երբ խօսքերդ վերջանան՝ մենք կ'նստենք լուռ ու  
անշարժ:

✕

Միայն ծառերը կ'ըշնջան մթութեան մէջ:

Գիշերը կ'զունատի, կ'ղալկանայ՝ Օրը կ'բացւի:

Կ'նայինք մենք միմեանց աչքերին ու կերթանք  
ամեն մէկս իր ճամբով:

Խօսիր ինձ հետ, սիրելիս, պատմիր ինձ խօսքով  
էն՝ որ երգում էիր:

XXX

Դու իրիկայ ամա ես՝ իմ ցնորքներիս երկնքում  
լողացող:

Ես վառ զոյներով զարդարում եմ քեզ ու իմ  
սիրոյ կարօտով քո դիմագծերը վերստեղծում:

Իմն ես դու, ամբողջովին իմը, օ դու, իմ անհուն  
երազներիս Բնակչուհի:

Վարդագօծ բոցավառ են քո ոտքերը՝ սրախ  
տենչանքի կարմրութեան աէս, օ դու, իմ վերջալոյսային  
երգերիս դաշտերի Հնձուորուհի:

Դառնանուշ են քո շուրթերը՝ տանջանքիս զինու  
համբց:

Իմն ես դու, ամբողջովին իմը, օ դու իմ մենաւոր  
երազներիս Բնակչուհի:



Կրքիս շուքով թուխացրել եմ աչքերիդ  
գոյնը, օ՛, դու, իմ նայածքիս խորութեան մշտա-  
կան հիւր:

Բռնեցի քեզ, սիրելիս եւ իմ նւագիս ցանցով  
կաշկանդեցի:

Իմս ես դու, ամբողջովին իմը, օ դու, իմ ամուս  
երազներիս Բնակչուհի:

XXXI

Սիրտս անքնակ մի թռչուն, իր եթերը գտել է  
քո աչքերում:

Նրանց մէջն է օրօրոցն արշալոյսի, էստեղ է  
թագաւորութիւնն աստղերի:

Ու նրանց խորքերն են սուգում իմ երգերը:

Թո՛ղ միայն ճակրեմ էդ երկնքում՝ նրա անս-  
պատ անհունութեան մէջ:

Թո՛յլ տուր միայն ծեղքեմ նրա ամպերն ու  
սաւառնեմ՝ նրանց արեգսածեմ՝ շող ծածանշներում:

XXXII

Սիրելիս, ասա՛, էդ բոլորը ծնշտ է՛:

Ամենը ծնշտ:

Աչերիս շանթերին կրծքիդ մատ ամպերը ամպրոպային պատասխաններ են տալիս:

Եւ էս ամենը ծնշտ է՛ իբր անուշ են շուրթերս առաջին սիրող բացող ծաղկի պէս:

Թէ՛ իմ մարմնիս վրայ են ապրում բոլոր յուշերը թառամող մայիսների:

Որ գետինը իմ ոտքերիս շփումից քնարի պէս հնչում է տաղերով:

Ծնշտ է եւ էն, որ գիշերն ինձ տեսնելուն պէս աչերից ցօղ աւջուներ է թափում եւ որ երջանկանում է արփիացնցուղ առաւօտը լուսամբում՝ նրբ պարուրում է իմ մարմինը:

Ծնշտ է, մեթէ ծնշտ է, որ քո սէրը աշխարհներ է անցել դարերով մենմենակ ու վնտրելիս է եղել ինձ:

Ուրեմն եւ էն՝ թէ՛ երբ դու գտար ինձ՝ քո դարերուր ցնորքը շամբուշ վերջին իր հանգիստը գտաւ իմ հոգեթով կօսքերում, նւ ծաւի աչերում, նւ քնքոյշ շուրթերում՝ նւ գեղազան վարսերում:

Իրան է, որ ահա էս իմ փոքրիկ ծակատի վրայ է գծւած Ամմահութեան գաղտնիքը:

Ասա՛, սիրելիս, եթէ էս ամենը ծնշտ է՛:

XXXIII

Սիրում եմ քեզ, նազելիս: Ներքը իմ սէրը:  
Ես բռնւած եմ ծամբէն կորցրած թռչնի նման:  
Երբ սիրաս թրթռաց՝ կորցրեց իր քողն ու  
մերկ մաց:

Ցաւակցօրէն պարուրիք նրան, սիրելիս, ու  
ներքը իմ սէրը:

Եթէ չես կարող ինձ սիրել — ներքը իմ ցաւը,  
սիրելիս:

Մի խեթիք էդպէս ինձ վրայ:

Ես կ'ըրաշեմ իմ անկիւնն ու կ'ստտեմ խա-  
ւարի մէջ:

Ձեռքերով կ'ծածկեմ իմ մերկ ամօթը:

Դարձրու դէմքդ, մի նայիր ինձ, սիրելիս, ու  
ներքը իմ ցաւը:

Եթէ սիրում ես ինձ՝ ներքը իմ ուրախութիւնը,  
սիրելիս:

Երբ քրջանկութեան հեղեղն առնի իր հետ իմ  
սիրտս՝ մի ծիծաղի իմ վտանգաւոր աւերի վրայ:

Երբ իմ գաճն ելնեմ ու ամենակարող սիրոյ ու-  
ժով իշխեմ քեզ վրայ, երբ՝ որպէս աստուծուհի քեզ  
շնորհներ տամ՝ տանք իմ հպարտութիւնը, սիրելիս, եւ  
ներքը իմ ուրախութիւնը:

XXXIV

Ինձ ոչինչ չասած՝ մի՛ գնա, սիրելիս:

Ես ամբողջ գիշեր սպասում էի եւ անա աշերս  
գոցում են անքնութիւնից:

Վախենում եմ՝ քնիս մէջ կորցնեմ քեզ:

Մի՛ գնա, սիրելիս, ինձ ոչինչ չասած:

Վեր եմ ցատկում, մեկնում եմ ձեռքս, որ քեզ  
դիպչեմ: Հարցնում եմ ինձ-ինչ է սա, երանգ է:

Ախ, երանի կարողանայի ձգել իմ սիրոյ կա-  
պանքները ոտքերիդ ու շղթայել նրանց իմ սրտի հետ:

Մի՛ գնա, սիրելիս, ինձ ոչինչ չասած:

XXXV

Դու ինձ հետ խաղ ես անում՝ որ ես ուշ գլխի  
ընկնեմ:

Ժիծաղի պոռակումով խաբում ես ինձ՝ որ ես բո  
արցունքները չտեսնեմ:

Ես գիտեմ, գիտեմ քո խորամանկութիւնները, —  
Դու երբէք չես ասի էն՝ ինչ որ ուզում ես:

Դու գտնում ես քիւր ծամբաներ ինձնից թաք-  
նելու համար՝ որ քեզ չզգրեմ:

Դու կանգնում ես մեկուսի՝ առանձին, որ ամ-  
բոխի մէջ քեզ չկորցնեմ:

Գիտեմ, գիտեմ եւ քո խորամանկութիւնները, —  
Երբէք չես գնայ էստեղ՝ ուր ուզում ես:

Դու կարող ես աւելին սլահանջել քան ուրիշ-  
ները՝ դրա համար էլ լռում ես:

Չարածճի անհոգութեամբ դու մերժում ես իմ  
բոլոր նւէրները:

Ես գիտեմ, գիտեմ քո խորամանկութիւնները —  
Դու երբէք չես վերցնի էն՝ ինչ որ ուզում ես:

XXXVI

— Նայիր, սիրելիս, շշնջաց նա ինձ:

— Հեռացիր — յանդիմանեցի ես: Նա չջար-  
ժւեց:

Կանգնել ու բռնել էր ձեռքս:

— Դէ, թո՛ղ — ասացի ես: Նա չէր թողնում:

Մօտեցաւ ականջիս. նայեցի՝ «ինչպէս չես ամա-  
շում» — շազոնեց, անշարժ էր:

Նա շրթունքները ժօտեցրեց այտիս: Ես դողացի.  
«Շատ հեռու գնացիր» — ասացի: Բայց չամաշեց:

Նա վարսերիս ծաղիկ էրնց. «Դճուր», — ասացի  
ես ու նա անշարժ դեռ կանգնած էր:

Եւ ա՛նա նա վերցրեց վզիս ծաղկապարուր հիւս-  
կէնն ու գնաց:

Ես նէ լալիս եմ՝ նէ հարցնում՝ սրտիս. «Դճուր  
նա ետ չի դառնում»:

### XXXVII

Ի՛մ վիզն ես ուզում զարդարել, նագելիս,  
թարմ ծաղիկներից հիւսած քո պսակով:

— Բայց չէ՛ որ դու գիտես, որ իմ հիւսած մի  
հատիկ պսակը շատերի համար է՝ նրանց — որոնք  
երեւում են մեզ միայն մի ակնթարթ, որոնք քնակում  
են դեռ նւս անյայտ աշխարհներում եւ որոնք ապրում  
են քանաստեղծների երգերում:

Ուշ է քո խնդիրը՝ սրտեր փոխանակելու:

Կար ժամանակ երբ իմ կեանքը նման էր չբաց-  
ւած ծաղկի. նրա ամբողջ բուրմունքը պահած էր էս-  
տեղ՝ խորքում, ինչպէս ծաղկինը — իր բաժակում:

Հիմա նա ցնդւել է, ցրւել ամենուր:

Ով գիտի ինչ հմայքներով կարելի է նորից  
հաւաքել է՞ն բուրմունքն ու կրկին պարփակել ներսում:

Սիրոս էնքան իմը չէ, որ միայն մէկին տալու  
իրաւունք ունենամ, դրա համար էլ նա տրւում է շա-  
տերին:

### XXXVIII

Ժուկով ժամանակով քո բանաստեղծը, սիրելիս,  
իր նաւը՝ որ մի դիւցազնական մեծ պոէմ էր — եր  
մտքի ծովում բաց թողեց:

Աւան, ես անզգոյշ եղայ. նա դիպաւ ոտերիդ  
գնգացող ապարանջամներին ու խորտակեց:

Նաւը ջարդ ու փշուր եղաւ ու երգերս շաղ գա-  
լով փուեցին քո ոտերիդ տակ:

Հին կոիւների մասին արած պատմութիւններին  
ողջ բեռը՝ ինդացող ալիքների բերանն ընկած՝ թռչեց  
արցունքից ու ծովի յատակն անցաւ:

Իմ էս ամբողջ կորուստը, սիրելիս, քարի  
արա ինձ:

Եթէ ես կորցրել եմ իմ անմահութեան իրաւունքը  
մահից յետոյ — դարձորն ինձ անմահ՝ քանի ապ-  
րում եմ:

Եւ ես չեմ լայ կորուստիս համար ու չեմ  
մեղադրի քեզ:

### XXXIX

Ամբողջ առաւօտն ուզում եմ պսակ հիւսել, քայց  
ծաղիկները սահում են ու թափւում:

Դու նստած թաքուն հետեւում ես ինձ որոնող  
աչերիդ անկիւնով:

Հարցրու էդ աչքերին, որ լաւ որոգայթներ են  
լարում՝ ո՞վ է մեղաւոր:

Ուզում եմ մի երգ երգել — իզուր, չե յա-  
ջողում:

Թաքնւած ժպիտն է դողում շուրթերիդ վրայ,  
հարցրու նրան՝ ինչու չեմ կարողանում երգել:



Թող քո ժպտուն շուրթերը երդումով պատմեն  
թէ ինչպէս — լոտոսի բաժակում հարքած մեղի պէս —  
ձայնս կտրեց լութեան մէջ:

Իրիկուն է. ժամ է, որ ծաղիկները փակեն թեր-  
թիկներն իրենց:

Թոյլ տուր նստեմ կողքիդ ու հրամայիր շուր-  
թերիս կատարել էս գործը, որ կարող է իրագործուել  
լութեան մէջ՝ առկայծող աստղերի աղօտ լոյսի տակ:

## XL

Նրբ գալիս եմ քեզ մնաս բարեւ ասելու՝ կաս-  
կածի ժմիտն է օձանում քո աչքում:

Ես էնքան յաճախ եմ էղպէս արեւ, որ դու  
կարծում ես թէ շուտով կ'դառնամ:

Ճիշտն ասած, ես էլ եմ կասկածում քեզ պէս:

Որովհետեւ նորից ու նորից վերադառնում են  
օրերը զարնան, լքիւ լուսինը հրաժեշտ է տալիս ու  
կրկին գալիս է մեզ մօտ, վերստին բացում են,  
փթթում ծաղկունք, տարէց — տարի զուբում բարու-  
նակ ծիւղերում — թերեւս ես էլ՝ բաժանում եմ  
քեզնից միայն նրա համար, որ նորից ետ դառնամ:

Բայց զսակեր պահ մի մուտրութիւնդ: Մի վրդով-  
ւեր հզուր:

Նրբ ես ասում եմ՝ ընդմիջտ բաժանում եմ  
քեզնից — ընդունիր սա որպէս ճշմարտութիւն ու թող  
արցունքի մլար մշուշը պահ մի մթնեցնի միշտ պսակ-  
ներն աչերիդ:

Իսկ յետոյ՝ երբ ես նորից ետ դառնամ, ժպտամ  
մտողւշ հրճանքով — ինչպէս միայն դու ես ժպտում:

## XLI

Ուզում եմ արտասանել քեզ համար պահած  
գաղտնածածուկ բոլոր խօսքերը, բայց չեմ համարձակ-  
ւում, վախենում եմ ծիծաղես ինձ վրայ:

Դրա համար էլ ինքս եմ ինձ վրայ ծիծաղում ու  
գաղտնիքս կատակի տալիս:

Ես արհամարհեցի տանջանքս՝ վախենալով, որ  
դու էդպէս կ'վարես:

Ուզում եմ ասել քեզ ճշմարտագոյն էն բոլոր  
խօսքերը, որ պահել եմ քեզ համար՝ բայց չեմ յան-  
դրգնում, վախենում եմ, որ դու չհաւատաս նրանց:

Դրա համար էլ խօսքերս դարձնում եմ սուտ եւ  
ինչ որ մտածում եմ՝ նրա հակառակն եմ ասում:

Ես ձեւացնում եմ, որ տանջանքս դատարկ բան  
է, վախենալով, որ դու էդպէս կ'մտածես:

Ուզում եմ բերանս բանալ եւ ամենաթանկա-  
զին խօսքերս, որ քեզ համար եմ պահել, ասեմ, բայց  
չեմ համարձակում, կասկածում եմ — կ'հատուցնու  
ինձ արդեօք:

Դրա համար էլ քեզ կանչում եմ կոպիտ անուն-  
ներով ու ցոյց եմ տալիս իմ քիրտ ուժը:

Ստիպում եմ քեզ տանջուել՝ վախենալով, թէ  
երբէք չես իմանայ ինչ է տանջանքը:

Ուզում եմ լինել քեզ մօտ առանց շշուկի, բայց  
չեմ յանդգնում՝ վախում եմ, սիրտս ինձ դաւածանի  
ու գտնի քո շուրթերի ծամբան:

Եւ ահա ես բարբաջում եմ շաղակրատի պէս ու  
սիրտս խօսքերի ետեւը թաքցնում:

Ես դաժանօրէն խիստ եմ դէպի իմ տանջանքը,  
վախենալով, որ դու էդպէս կ'վերաբերես:

Ուզում եմ հեռանալ քեզնից, բայց չեմ համար-  
ձակում, վախենում եմ նկատես իմ երկչոտութիւնը:

Դրա համար էլ ուայի պէս վեր եմ քարձրացնում  
գլուխս հպարտօրէն ու յաղթական համարձակութեամբ  
մտնում եմ էնտեղ, որտեղ դու ես:

Եւ յառուձ աչերիդ անընդհատ շեշտակի խայ-  
թոցները միշտ նորոգում են իմ թարմ տանջանքը:

XLII

Ե՛յ, խելան, թունդ հարբած կոնծաքան՝

Եթէ դռներդ բաց ես անում քացով ու յիմար ես  
ծեւացնում քեզ ամենքի առաջ,

Եթէ մի գիշերայ մէջ դատարկում ես քսակդ ու  
ծաղրում խնւացիութիւնը,

Եթէ դու թափառում ես տարօրինակ կաճամնե-  
րով ու զւարժանում ցանցառ, անմիտ բաներով,

Գործ չունիս խելքի եւ հմաստի հետ,

Եթէ փոթորկի ժամին առագաստդ պարզելով  
մորիկի հանդէպ շարդում ես դեկդ երկու մասի —

...ապա ես հետեւում եմ քեզ, ընկեր, զալիս  
եմ հարբելու քեզ հետ ու ջհանդամը կորչեմ — հէրն  
անիծած:

Իմ օրերն ու գիշերները ես կորցրել իմ գիտուն  
եւ հմաստուն հարեւամների շրջանում:

Շատ բան գիտնալուց մագերս ծերմակել եմ ու  
շատ դիտելուց աչքերս մթնել:

Տարիներով ես հաւաքել եմ ու դիզել բաների  
փշրանքներ ու մանրութներ:

Ջարդի, տրորի, պար եւ նրանց վրայ ու բոլորը  
տոնը քամուն:

Որովհետեւ ես գիտեմ՝ ամենախոր հմաստու-  
թիւնն է — լինել հարբած ու ջհանդամը կորչել, հէրն  
անիծած:

Թող կորչեն խղճի ջուրը սուտ խայթոցները, թող  
ես անդարձ կորցնեմ հիմ ճամփէս:

Թող ամենի խելագարման ցատունս ինձ հանի  
խարխուհից:

Աշխարհը լիքն է օգտակար եւ ընդունակ,  
քանուրդ ու գործաւոր մարդկանցով:

Նրանցից ոմանք հեշտութեամբ գնում են առա-  
ջին շարքերում, միւսները համեստօրէն շարժւում են  
Նրանց ետեւից:

Թողէք երջանիկ լինեն Նրանք ու յաջողակ — ու  
թողէք ես լինեմ փուչ ու անպիտան:

Որովհետեւ ես գիտեմ, ջուրը գործերին մի վերջ  
կայ լինել հարբած ու ջհանդամը կորչել — հէքն  
անհիծած:

Երդու՞մ եմ հրաժարել էս վայրկեանից իսկ  
արժանաւոր մարդկանց շարքը դասելուց:

Դէն եմ շարտում հպարտութիւնս՝ հիմ գիտու-  
թեամբ ու կարողութեամբ դատելու — ո՞րն է լաւ,  
ո՞րը վատ:

Ես փշրում եմ յուշերիս ար:ութալի անօթը՝  
չնո տալով արցունքներես վերջին կաթիլը:

Ալ պտուղների պէս կարմրին տուող զինու  
փրփուրը կ'սուզեմ ու նրանով կ'լուսաւորեմ հիմ  
ծիծաղը:

Ես դիտմամբ պատաս-պատաս եմ անում քա-  
ղաքացու հիմ ցո:ցանակը:

Ու սուրբ երդում եմ տալիս լինել անպիտան,  
հարբած ու ջհանդամը կորչեմ — հէքն անհիծած:

XLIII

Ո՛չ ընկերներ, ինչ ուզում էք ասեք՝ ես երբէք  
ժգնաւոր չեմ դառնայ:

Եւ երբէք ծգնաւոր չեմ լինի՝ մինչև որ նա ինձ  
հետ կուսանոց չ'մտնի:

Մինչև շունչսում մի մեկուսացած առանձին  
ապաստան ու հեծութեան ուղեկցուհի՝ ծգնաւոր չեմ  
դառնայ — սա է իմ անդարձ վճիռը:

Ո՛չ ընկերներ, երբէք ես չեմ ձգի իմ տունն ու  
տեղը, օջախս ու չեմ գնայ անտառի խորքերը, քանի  
որ չի հնչում թովիչ ծիծաղը նրա արծագանգող սրա-  
հում, չի ծածանւում շափրանի գոյնի ծածկոցը քամուց  
ու խլացած շշուշը չի խորացնում խորութիւնը լու-  
թեան:

Ես երբէք ծգնաւոր չեմ դառնայ:

#### XLIV

Ներքի, Արժանապատիւ Հայր, մեղաւոր էս  
զոյզը:

Էսօր զարնան վայրի քամիները փչում են բարկ  
զաւարումով եւ իրենց հետ տանում են մեռած տերեւ-  
ներն ու փոշին հեռով... Նրանց հետ կորչում են եւ քո  
բոլոր պատգամները:

Մի ասի, Հայր, թէ կեանքն ունայնութիւն է:

Որովհետեւ մենք էս անգամ կարճ ժամանակով  
ենք հաշտութիւն կնքել մահի հետ՝ միայն մի քանի  
կնկաբոյր ժամով ենք մենք դարձել անմահ:

Եթէ նոյն իսկ Թագաւորական բանակը զայ ու  
կատաղօրէն յարձակի մեզ վրայ՝ մենք զուլեններս  
տխուր Թափ կ'տանք ու կասենք՝ «Դուք մեզ խանգա-  
րում էք, եղբայրներ: Եթէ դուք սիրում էք էղ աղմը-  
կոտ խաղը՝ զնացէք ուրիշ տեղ նիզակ ծօծելու: Որով-  
հետեւ մենք միայն մի քանի փութանցիկ վայրկեանով  
ենք դարձել անմահ:»

Իսկ եթէ քարեկամ մարդիկ զային ու հաւաք-  
ւէին մեր շուրջը՝ մենք համեստութեամբ կ'քարեւէինք ու  
կասէինք՝ «Դս թանգ քախտը մեզ նեղում է ու ծնշում:  
Անյուն եթերի տարածութիւնը, որտեղ ապրում ենք  
մենք — շատ է փոքր ու նեղ: Որովհետեւ զարնան ծա-  
ղիկները երամսերով բացում են ու փթթում, իսկ  
մեղունների ժրաջան թեւերը իրար են զարնում՝ պար-  
սելիս: Մեր փոքրիկ երկինքը, որտեղ ապրում ենք  
մենք, երկու անմահներս, ճիծաղելի նեղ է:»

*XLV*

Ծամբայ ընկնող հիւրերին «Տէր ընդ ձեզ» ասա  
բարի երթ մաղթելով մաքրի նրանց հետքը ոտքերի:  
Դն, ինչ որ մօտ է, պարզ ու սիրելի՝ սրտիդ  
սեղմի ժպտալով:

Էսօր՝ իրենց մահւան ժամը շիմացող տեսիլք-  
ների հանդէսն է:

Թող քո ծիծաղն էլ լինի անմեղօրէն զւարթ՝ ինչ-  
պէս լոյսի շողշողուն փայլատակումը ջրի ծփանքում ու  
փոփուրում:

Թող քո կեանքն անհոգ ցնծութեամբ կաքաւի  
Ժամանակի ափին՝ ինչպէս ցօղի կաթիլը կանաչ տե-  
րեւի նուրբ ծայրին:

Ջարկիր քնարիդ, թող լարերը հնչեն համաշափ  
թռուցիկ նւագներով:

*XLVI*

Չգեցիր ինձ ու գնացիր քո ծամբով:

Ծս մտածեցի՝ թէ պէտք է լալ ու պահել հոգու  
մէջ միայն քո դէմքը ընտելացած երգերի ոսկէ հիւս-  
կէնով:

Բայց, աւան, դու խեղկատակ բախտ, չէ՞ որ  
Ժամանակն էսքան կարճ է:

Տարէց տարի թօշնում է ջահելութիւնը, սլա-  
նում են օրերը զարնան, ծաղիկներն էլ էսքան են  
քնքոյշ ու նուրբ, որ մեռնում են առանց պատճառի,  
իսկ կեանքը — ինձ մի հմաստուն է ասել — կեանքը  
լոտոսի ցօղի կաթիլ է միայն:



Եւ էս ամենը մոռանամ՝ որ թիկունքն ինձ դար-  
ձնող կնոջ ետեւից մտիկ տամ:

Դա կ'լինէր նւ անմիտ, նւ կոպիտ — չէ որ  
ժամանակն էնքան կարճ է:

Դէ, եկէք իմ անձրեւոտ զիշերներ՝ ամպրոպային  
զոռումով շանթաքեր, ծիծաղիք դու, իմ ոսկի աշուն,  
նկ, անհոգ ու կամշոտ ապրիլ՝ շոայլիք համբոյրներ...

Եկ եւ դու, դո՛ւ էլ, դո՛ւն էլ եկ:

Դուք զիտէք, սիրելիք, որ մենք մահկանացու  
ենք: Մի՞թէ խելացի է կոտորած սրտով մտալ՝ կնոջ  
պատճառով որ իր սիրտը մեզնից է խլել:

Ձէ որ ժամանակն էնքան կարճ է:

Բաղք է նստել անկիւնում, խորհել եւ երգել  
յանգերով որ քո մէջ է իմ ամբողջ աշխարհը:

Հերոսութիւն է՝ զօրկախառնել վշտի հետ, փայ-  
փայլել նրան ու հրաժարել միտթարութիւնից՝ սիր-  
փանքը մերժել:

Բայց արն կրկին մատաղ դէմքը իմ դրան մօտ  
է, կրկին մեր հայեացքներն ակնապարտ յառել են  
միմեանց:

Դէ ինձ անելու ոչինչ չի մտում, միայն թէ սրբեմ  
արցունքս ու նորից երգեմ՝ նոր եղանակով...

Ձէ որ ժամանակն էնքան կարճ է:

XLVII

Քանի որ դու էդպէս ես ուզում՝ էլ չեմ երգի:  
Քանի որ սիրտդ թրթռում է՝ չեմ նայի աչերիդ:  
Եթէ ես զքոսանքի ժամանակ վախեցնում եմ  
քեզ՝ էլ չեմ անցնի քո ճամբով:

Դէ, որ եանգարում եմ պսակ հիւսելդ՝ էլ չեմ  
քայլի քո խաղաղ պարտէզի մօտով:

Քանի որ իմ թիակից ջուրը շատ է շաշում-շա-  
ռաշում, էլ չեմ մօտենայ նաւակով քո ափին:

XLVIII

Ազատիք ինձ, սիրելիս, քո հմայքիդ կապանք-  
ներինց:

Բան է, էլ պէտք չի համբոյժի գինին:

Շունչս կտրւում է ինկաբոյր կնտրուկի թանձր  
ամպերինց:

Բաց դուրը, թող ներս խուժի լոյսն առաւօտի:

Ես ինձ կորցրել եմ քո մէջ՝ պարուրած գգւանք-  
ներին ծալքերով:

Ազատիք ինձ քո թովիչ հրապոյրինց ու ետ տուր  
ինձ իմ առնութիւնը, որ կարենամ առաջարկել քեզ  
իմ փրկող սիրտը:

XLIX

Բռնել եմ նրա ձեռներն ու իրեն սեղմում եմ  
կրծքիս:

Ես ուզում եմ՝ ատորել գիրկս նրա հմայքով,  
վերցնել համբոյժներով ժպիտը նուրբ այտերից ու մե  
նայուածքով ծաւի աչերի հայեացքն ըմպել:

Բայց աւանդ... մի՞թէ հնարաւոր է:

Ո՞վ կարող է խելել երկնքից նրա կապոյտը  
լազուր:

Ես ուզում եմ բռնել գեղեցկութիւնը, բայց նա  
դուրս է թռչում ու գրկումս մտում է միայն մարմինը:

Յուսահատ ու վհատ՝ նահանջում եմ: Ի՞նչպէս  
կարող է մարմինը դրաչել էն ծաղկանց, որոնց միայն  
հոգին է համարձակում մօտենալ:

L

Սիրաս, սիրելիս, օր ու գիշեր տենչում է քո  
հանդիպմանը, էն հանդիպմանը, որ նման է ամեն ինչ  
լսփող աւերիչ մահի:

Փոթորկի նման վանիք ինձ հետու, վերցրու՝ ինչ  
որ ունեմ, խանգարիք քունս ու յափշտակիք երագներս:

Շորթիր իմ ամբողջ աշխարհը:

Ու թող, որ էդ աւեր ամայութեան, հոգու էդ  
մերկութեան ժամին միածուլենք գեղեցկութեան մէջ:

Աւանդ, իզուր են տենչերս:

Մի՞թէ յոյս կայ միածուլելու որեւէ քանում եթէ  
ոչ . Բո մէջ, իմ Աստուած:

LI

Ի՛է, վերջացրու վերջին երգը — բաժանւենք:

Մոռացիր էս գեշերը՝ երբ նա էլ չ'կայ:

Ո՞ւնս էի ուզում շրթայիլ գրկումս: Երագները  
երբէք չեն կարող գերի դառնալ ու շրթայել:

Ազան՝ ձեռքերով սեղմում իմ կրծքիս դատար-  
կութիւնն ու սիրտս պայծում է բարկութիւնից:

LII

Խնչու հանգաւ ծրագը:

Ես ծածկեցի նրան իմ ծածկոցով, որ քամուց  
պաշտպանեմ եւ դրա համար հանգաւ ծրագը:

Ծաղիկն ինչո՞ւ թառամեց:

Ես ոիշտ ու անյագ սիրով նրան կրծքիս սեղմեցի,  
դրա համար էլ էն ծաղիկը թառամեց:

Խնչո՞ւ ատուն լռեց:

Ես պատուար շինեցի նրա վրայ, որ նա ինձ  
ձառայի ու լռեց ատուն:

Խնչո՞ւ կտրեց քնարի լարը:

Ես ուզեցի, որ նա իր ուժից վեր ձայն հանի,  
դրա համար էլ կտրեց լարը:

LIII

Դնչո՞ւ ես դու էդպէս Նայում, ուզում ես ինձ  
ամաչեցնել:

Ես եկել եմ ոչ որպէս մուրացիկ:

Ես միայն մի փութանցիկ ժամով կանգ եմ առել  
քո բակի ծայրին՝ պարտէզիդ ցանկապատի ետեւում:

Դնչո՞ւ ես դու էդպէս Նայում, ուզում ես ինձ  
ամաչեցնել:

Վարդ չեմ քաղել քո պարտէզից եւ ոչ էլ պտուղ  
եմ պոկել:

Ես միայն ծամբու շւարում՝ ծառի տակ պատու-  
պարեկ եմ, ուր ամեն մի անծանօթ ծամիորդ կարող է  
հանգստանալ:

Վարդ չեմ քաղել քո պարտէզից:

Այո, ոտքերս յոգնած են ու յորդ անձրեն  
սկսեց:

Գլխիկոյ քամբուկի օրօրող շիղերում ոռնում  
է քամին:

Ամպերը՝ կուի դաշտից հալածաւածների նման  
սլանում են երկնքի երեսով:

Ոտքերս յոգնած են:

Զ՛գիտեմ ինչ ես մտածում իմ մասին, ո՞ւմ  
հետ ես շփոթում ինձ եւ ո՞ւմ ես սպասում դուանդ  
մօտ կանգնած:

Կայծակի սլաքաշեշտ շանթերը շլացնում են  
աչքերդ հեռուն դիտող:

Ես չեմ հմանում՝ նկատում ես ինձ մթան մէջ:  
Զ'գիտեմ՝ ինչ ես մտածում իմ մասին:

Օրը վերջացաւ եւ անձրեւը սա՛ն մի կտրեց:

Ես թողնում եմ ծառի շաքը քո պարտէզիդ  
ծայրին ու բակիդ կողքի կամաչ գետինը:

Մ'թնում է: Փակիր քո դուռը: Ես ծամիայ եմ  
ընկնում:

Օրը վերջացաւ:

LIV

Ո՛ւր ես շտապում էս ուշ գիշերին կողովը ձեռ-  
քիդ՝ երբ շուկան վերջացել է:

Ամենքն իրենց շալակներով տուն են գնացել.  
Եւսինը բարձրացել է գիւղի ծառերի կատարը:

Լաստավարին կանչող ձայների արձագանգը  
պղտոր գետի վրայով հասնում է հեռաւոր ծահճին, ուր  
ննջում են վայրի քաղերը:

Ո՛ւր ես շտապում էս ուշ գիշերին կողովը ձեռ-  
քիդ՝ երբ շուկան վերջացել է:

Քունը դրել է իր մասներն աշխարհի աշ-  
քերի վրայ:

Լուռ են քներն ազնուների, բամբուկի տերե-  
ւների շշուղջ կտրել է:

Գաշտերից սունն դարձած բանտրները փռում են  
իրենց կսիքները բակերում:

Ըս ուր ես շտապում ուշ գիշերին կողովը ձեռ-  
քիդ՝ երբ շուկան վերջացել է:

LV

Կէսօր էր, երբ դու գնացիր:

Արեւն երկնքում փայլում էր պայծառ:

Վերջացրել էի գործս ու մնակ նստած էի իմ  
պատշգամբում, երբ դու գնացիր:

Երբեմն յանկարծակի հողմս էր փչում՝ իր հետը  
բերելով բուրմունքն անուշ հեռու-հեռու դաշտերի:

Տատրակներն առանց յոգնելու մնչում էին. մի  
միդու միտրել, ընկել էր սենեակս ու բզզացնում էր՝  
հետը բերելով համբաւները հեռու-հեռու դաշտերի:

Քնած էր գիւղը կէսօրւայ տապին: Փռւած է  
ծամփան ամայի:

Երբեմն յանկարծակի լսում էր սոսափիւնը  
տերեւների ու կրկին կորչում:

Ես դիտում էի երկինքն ու նրա լագուրի վրայ  
բանւածք զործում էն անւան տառերով, որ ես գիտէի՝  
երբ գիւղը քնած էր կէսօրւայ տապին:

Մոռացել էի՝ մագերս հիւսեմ: Ջեփիւղը ծուլօրէն  
ծածանում էր նրանց այտերիս մօտ — խաղ անելով:

Գետը հոսում էր սուերախիտ խաղաղ ափերով:

Չէին շարժւում հեղձ ամպերը ծիւնաթոյր:

Մոռացել էի՝ մագերս հիւսեմ:

Կէսօր էր՝ երբ դու գնացիր:

Ծամփու վրայ կորչակուռ փոշի էր կանգնած ու  
դաշտերն արեւկէզ հառաչում էին տոչորելով:

Տատրակները մշում էին սաղարթախիտ պու-  
րակում:

Ես մինակ նստած էի իմ պատշգամբում՝ երբ  
դու գնացիր:



LVI

Նս մէկն էի էն քազմաթիւ կանսանցից՝ որ գրադ-  
ւած են իրենց ընտանեկան առօրեայ սու հոգսերով:

Դ՛նչու դու ինձ ընտրեցիր ու տարար մեր քաղցր  
ընտանեկան անուշ յարկի տակից:

Զ՛պարզւած սէրը — սուրբ է: Փակւած սրտի  
խաւարում նա փայլում է գոհար քարի նման:

Օրւայ տարօրինակ լոյսի տակ նա խղճօրէն  
աղօտ է, դժգոյն:

Ախ, դու պատուեցիր իմ սրտի քողն ու լոյս  
աշխարհ հանեցիր իմ թրթռացող սէրը՝ աւերելով առ-  
յաւէտ էն շաք անկիւնը, որտեղ նա իր բունն  
էր հիւսել:

Ուրիշ բոլոր կանայք մնացել են առաջնայ պէս:  
Նրանցից ոչ մէկը չի նայել իր էութեան կոր-  
քերը եւ նրանք իրենք էլ չեն իմանում իրենց  
գաղտնիքը:

Նրանք անհոգ ժպտում են ու լալիս, շաղակրա-  
տում են ու աշխատում: Ամեն օր տաճար են գնում,  
ծրագ վառում ու գետից ջուր են կրում:

Նա հաւատում էի, որ իմ սէրն ազատ կ'ըլնի  
ամոթից ու հեռու անտունների խայտառակութիւնից:

Բայց դու երես ես դարձնում ինձնից:

Այո, քո ծամիան քայ է քո առաջ, քայց իմ  
դարձիս ծամիան՝ ետ գնալու համար — դու փակել ես  
ու թողել ինձ բոլորովին մերկ աշխարհի առաջ եւ օրն  
ու գիշերը ակնապիշ հայեացքով շին հեռացնում իրենց  
անթարթ աչքերն ինձնից:

LVII

Ծա բաղնիցի քո ծաղիկը, ո՛վ կեանք...

Սնդմեցի կրճքիս ու փուշը խոցեց:

Ծրբ անցաւ օրն ու մթնեց՝ տեսայ, որ ծաղիկը  
թառամել էր, մասցել է միայն խոցը:

Դեռ շատ հրաշագեղ ու անուշաբոյր ծաղիկներ  
կունենաս դ՛ու, կեանք:

Սակայն եմ՝ ծաղիկ բաղնիլու ժամանակը անցել  
է ու շափառուկ գիշերում՝ ես վարդ չունեմ՝ մասցել է  
միայն խոցը:

LVIII

Մի առաւօտ լոտոսի տերեւով պարուրած ծաղ-  
կեայ հիւսկէն տւեց ինձ մի կոյր աղջիկ ծաղկոցում:

Փաթաթեցի հիւսկէնը վզիս ու փայլեցին ար-  
ցունքներն իմ աչքերում: Համբուրեցի նրան ու ասի:

— Կոյր ես դու, ինչպէս իրենց՝ ծաղիկները, եւ  
դու ինքդ էլ չ'գիտես, թէ որքան սիրուն է քո նւէրը

Գու՛ն ի՛նչ միայն Աստծու ստեղծագործութիւնն ես, ի՛նչ կէն, ալ եւ տղամարդկանց, էդ նրանք են իրենց հոգու գեղեցկութեամբ քեզ միշտ զարդարում:

Ոսկէ երեւակայութեան մանւածքից բունաստեղծ-  
նեքը քեզ համար հիւսւածք են գործում ու նկարիչները  
միշտ նոր անմահութիւն դրոշմում քո դէմքին:

Ժուլք իք մարգարիտն է տալիս, հանքերը՝ ոսկին,  
ամրան պարտէզները ծաղկունք են շնորհում, որ  
գուրնն, զարդարեն քեզ ու դարձնեն աւելի թան-  
կագին:

Տղամարդու սրտի աւիւնն ու տննչը իրենց փայ-  
լով շուք են տալիս քո ջահէլութեանը: Գու կէս կին ես՝  
կէս ցնորք:

Կեանքի ժխորի ու աղմուկի մէջ կանգնած ես  
դո՛ւ, քարից կերտած գեղեցկութիւն, լուռ ու մնսակ,  
անշարժ, հեռո՛ւ:

Հսկայ ժամանակը սիրահարւած՝ ոտքերդ է  
ընկել ու շնչում է՝

— Ասա՛, ասա՛ ինձ, ի՛նչ դու շքնաղ կոյս, ասա  
ինձ, սիրելիս:

Բայց քո խօսքդ մեռած է քարի մէջ, ի՛նչ Անսա-  
սան Գեղեցկութիւն:

Հիւն, սիրտ իմ, թող քաղցր լինի ժամը հրա-  
ժեշտի:

Թող դա լինի կատարելութիւն եւ ոչ մահացում:

Թող սէրը ձուլի յուշերին — տանջանքը երգին:

Թող քնի մօտ փակւեն թեւերն ու էդպէս վեր-  
ջանայ վերասլաց թռիչքը դէպ եթեր:

Թող քո ձեռներդ վերջին շոյումը լինի քնքոյճ՝  
ինչպէս զիշերային ծաղկի փառաբշանքը:

Դանդաղեցրու վայրկեանդ, կանգ առ, ով հրա-  
շագեռ վախճան, ու լուրթեան մէջ ասա վերջին  
խօսքերդ:

Ես երկրպագում եմ քեզ ու բարձր եմ պահում  
ծրագս, որ լուսաւոր լինի ճամբադ:

Մ'ընչադին՝ երագիս խաւար կածանով գնում էի  
իմ անցեալ կեանքում ծանօթ սիրուհուս մօտ:

Նրա տունը կանգնած էր խուլ փողոցի ան-  
կիւնում:

Իր սիրած սիրամարզն իրիկայ հովի դէմ ննջում  
էր վանդակի ծողի վրայ եւ աղանդիները մինչ կուշ էին  
եկել իրենց անկիւնում:

Նա շէմքի մօտ ծրագը զետին դրեց ու կանգ  
առաւ իմ առաջ:

Քարձրացրեց իր կոշոր աչքերը՝ նայեց դէմքիս  
ու հարցրեց շշուկով — «հնց ես, ընկեր, լա՛ւ ես:»

Ուզեցի պատասխան տամ, բայց մեր լեզուն  
կապեց:

Շատ միտք արի՛ չ՛կարողացայ յիշել մեր  
անունները:

Արցունքները փայլեցին նրա աչքերում: Մեկնեց  
ինձ աջ ձեռքը:

Բռնեցի ու լուռ կանգնած էի:

Ծրագի քոցն երերաց իրիկայ հովից ու հանգաւ:

### LXIII

Ծամբորդ, դու մեկնելո՛ւ ես:

Դեռ լուռ է գիշերն ու կաւարը կանգնած ան-  
տառի վրայ:

Վառ են մեր վերնատան ծրագներն ու պայծառ,  
ծաղիկները շատ են թարմ ու ջահէլ աչքերը դեռ ար-  
թուն ու կայտառ:

Մի՛թէ արդէն ծամբայ ընկնելու ժամանակն է:

Ծամբորդ, դու մեկնելո՛ւ ես:

Մենք քո ոտքերը չենք կապել մեր աղերսող  
ձեռքերով:

Դո՞ւնեքը բաց ենք քո առաջ: Չի՞ղ թամբած կան-  
գնած է դրան մօտ:

Եթէ մենք ուզեցել ենք քո ծամբան կտրել, դա  
արել ենք միայն մեր երգերով:

Եթէ քեզ նոյն իսկ ուզեցել ենք ետ պահել է՛ն է՛լ  
միայն մեր հայեացքներով:

Անգոր ենք մենք, ծամբորդ, քեզ պահելու  
մեզ մօտ:

Արցունքից զատ մենք ոչինչ չունենք:

Ի՞նչ անշէջ կրակ է հուրհուրում քո աչքերում:

Ի՞նչ անհանգիստ ջերմ է հրահրում քո արիւնը:

Ի՞նչ կանչ է մթան մեջից քեզ շտապեցնում:

Ի՞նչ սարսափելի կախարդանք տեսար երկնքի  
աստղերում, որ նրանից յետոյ գիշերն անշշուկ ու  
դիւթիչ — քո սիրտը մտաւ:

Յոգնատամնջ սիրտ, եթէ դու ուրախ հանդի-  
պումներ չես փնտրում, եթէ դու հանգիստ ես ուզում  
մենք կ'մարենք ծրագներն ու մեր քնարեսերը կ'լռեն:

Մենք մթուշտան մէջ անշարժ կ'նստենք՝ ուն-  
կընդիտ տերեւների խշռոցին ու լուսինը զունստ շողեր  
կ'ծորի քո պատուհանի վրայ:

Օ, ծամբորդ, դա ի՞նչ անքուն ոգի է քեզ դիպել  
մտք գիշերայ խորքերից:

LXIV

Ես անցկացրի օրս արեւկէզ ու խորշակահար  
ծամբու փոշում:

Հիմն, իրիկայ հովին քախում եմ քարաւանսա-  
րայի դարպասը: Մոռացւած ու քարուքանդ է նա:

Հոյակաւ Աշաթն իր անօթի արմատներն ազա-  
հօրէն խրնւ է սլատի ծնդբւսածները:

Մի ժամանակ ծամբորդները գալիս ու լւանում  
էին էստեղ իրենց յոգնած ոտքերը:

Նոր ծնւած լուսնի աղօտ լուսի տակ նրանք  
փողում էին իրենց խափրներն ու նստոտելով՝ զրուցում  
տարօրինակ աշխարհների մասին:

Առաւօտը՝ երբ թռչունները գլարթացնում էին  
նրանց ու ծամբու ծաղիկները ժպտադէմ ողջունում —  
նրանք թարմացած գլարթնում էին քնից:

Իսկ երբ ես էստեղ եկայ, ոչ մի վառած ծրագ  
չընիմաւորեց ինձ:

Անթիւ գիշերներից մոռացւած ծրագների այրւած  
պատրոյկների մրոտ ըծերն են՝ պատերին ձեփած —  
կոյր աչքերով դիտում ինձ:

Չորացած ծահճի թփերում առկայծում են լու-  
սապէծիկներն ու քամբուկի ծիւղերը սուեր են զցել  
կանաչով ծածկւած ծամբու վրայ:

Օրը թերւում է ու ես ոչ մէկի հիւրը չեղայ:  
Երկան գիշեր է փուած սողես, իսկ ես յոգ-  
նած եմ:

LXV

Նորից քո ձայնն եմ ես լսում:

Արդէն իրիկուն է: Խոնջութիւնն ինձ շլթայել է սիրոյ պաղատող ձեռքերով:

Եւ դու ինձ կանչում ես:

Իմ՝ օրն ամբողջ ես քեզ գոհեցի, քայց դու, անսիրտ ուշաուհի, մի՞թէ պէտք է ինձնից եւ զհշերը խլես:

Ամեն բան իր չափն ու սահմանն ունի եւ զհշերայ մենութիւնը պատկանում է ամեն մէկին:

Մի՞թէ քո ձայնն է, որ կտրում է խաւարն ու հասնում ինձ:

Մի՞թէ իրիկունը չի նշում քո դասն մօտ գիշերայ երաժշտութեամբ:

Եւ անշուկ թեւաւոր աստղունք երբէք չեն մօտենում երկնքի երեսով տանիքին քո դղեակի՝ որտեղ կիզծ չկայ:

Կամ՝ քո պարտիզում երբէք չեն թափում թանամող ծաղիկները՝ քնքոյշ մահաւան գիւղն ընկնելով:

Եւ պէտք է որ դո՛ւ, անհանգիստ, կանչես, միշտ կանչես ինձ:

Իէ որ էդպէս է, թող թախճոտ սիրած աչերն իզուր սպասեն ու լան:

Թող ծրագը վառած մսայ մինակ ու լուռ տանը:

Թող լաստանաւը տուն տանի յոգնած քանուորներին:

...Իսկ ես, ես մոռացայ ընեմ — թողնում եմ իմ երագներս ու շտապում քո ձայնին:



LXVI

Մի խենթ թափառական փորձարար էր փընտրում:

Փոշու մէջ կորած, գզգզած գոռւզ մագերով, արեւից այրւած մարմնը նման էր սուերի. շուրթերը պինդ սեղմած՝ իր սրտի փակ դռների պէս իսկ աչքերը փայտատակում էին էն լուսապէծիկ կրակի նման՝ որ իր էգն է որոնում:

Նրա առաջ աղմկում էր անսահման ովկիանք:

Շաղակրատ, աղմկոտ ալիքները, վշշալով անվերջ, պատում էին թաքնւած հանքերի մասին, ծիծաղելով իրենց լեզուն չ'հասկացողների վոյ:

Գուցէ նա էլ յոյս չունէր, բայց նա չէր մտածում հանգստի մասին՝ որովհետեւ որոնումները դարձնէ էին կեանք նրա համար —

Դնչպէս ովկիանք՝ իր բազուկները երկնքին մեկ-նած յաւէտ ձգտում է անհասանելուն —

Դնչպէս աստղերը պտոյտ են անում շրջաններով ու միշտ փնտրում են էն նպատակը, որին երբէք չեն հասնելու —

Դնչպէս էլ խենթը փոշոտ թուխ մագերով դեռ թափառում էր ամայի ափերում փորձարարի ետեւից:

Մի անգամ մի գիւղացի կրեխայ մօտեցաւ նրան ու հարցրեց՝ «Ասա, էդ ո՞րտեղից գտար մէջքիդ կաւած ոսկի շղթան?»

Խենթը ցնցւեց. միշտ որ իր երկաթէ շղթան ոսկի էր դարձել: Դա երազ չէր, բայց ինքը չէր նկատել երբ է փոխւել:

Բարկացած ձեռքը կրեց ծակատին՝ ո՞րտեղ, էս ո՞րտեղ ինքը հասաւ նպատակին ու չիմացաւ:

Մովորութիւն արեց՝ քարեր հաւաքել, քսել  
շղթային եւ իսկոյն դէն ձգել առանց նայելու՝ կատա-  
րաւնց որելէ փոփոխութիւն: Էսպէս էլ խենթը գտաւ  
ու կորցրեց փորձաքարը:

Արեւը երկինքը ոսկեզօծելով խեղդում էր  
արեւմուտքում:

Ու նորից ետ դարձաւ խենթն իր եկած ճամբով  
կորցրած հարստութիւնը գտնելու — ուժասպառ, ջլատ-  
լած ու կորացած, ինչպէս արմատախիլ արւած ծառ:

## LXVII

Թէպէտ եւ սահուն քայլերով գիշերն է իջնում  
ու նշան է անում՝ լոնն երգերը բոլոր,

Թէպէտ եւ քո բոլոր ընկերները ցրել են քնելու  
եւ դու էլ յոգնած ես,

Թէպէտ եւ սարսափն է թաքնւած խաւարում ու  
քողարկւած է դէմքը երկնքի՝

Բայց եւ էնպէս, թռչնակս, լսիր ինձ, մի՛ ծա-  
ւիթ թեւերդ:

Ինձ անտառի տերեւների աղջամուռը չէ, նա  
մինչդեռ ծովն է ծարս լինում՝ սեւ ու դաժան վի-  
շապի պէս:

Փթթող յափրուկի ծաղիկները չեն կարաւում —  
Պարում է փրփուրը շառափնաթափ:

Օ՛, ո՛ւր է արեգջեր կանաչ եզերքն ու քո բունը:

Թոշնակ, օ դու իմ թոշնակս, լսիր ինձ, մի  
ծաւիր թեւերդ:

Նիրհել է քո ճամբու կողքին գիշերը տխուր.  
Ենել է այգը մութ սարերի ետեւում:

Լուսակարկաշ աստղունք՝ շնչասպառ, հեւիհեւ  
համբում են ժամերը, գունատ լուսինը յոգնել է մղուտ  
գիշերւայ խորքերը սուղւելուց:

Թոշնակ, իմ թոշնակ, լսիր ինձ, մի ծա-  
ւիր թեւերդ:

Չկայ յոյս քեզ համար ու վախեն սլու էլ ժա-  
մանակը չէ:

Չկայ քեզ համար ո՛չ էսօր, ո՛չ շունջ, ո՛չ  
ծպտուն:

Ոչ հանգիստ, հանգրւան եւ ոչ բուն:

Ունիս միայն մի գոյգ թեւ եւ արծակ: անշաւիղ  
երկինք:

Թոշնակս իմ, ինձ լս՛ր, մի ծաւիր թեւերդ:

LXVIII

Ո՛չ որ անմահ չէ, եղբայր, եւ ոչինչ յաւիտեան  
չի մտում:

Էս լաւ իմացած եղիք եւ ուրախ կացիք:

Կեանքը հին սովորական բերք չէ եւ ոչ էլ եր-  
կար է մեր բռնած ծամբան:

Միշտ միակ եւ նոյն երգիչը չէ, որ երգում է եւ  
ոչ էլ յաւիտեան նոյն հին երգն է նա երգում:

Ծաղիկը թառամում է ու մոռնում, բայց նա՛  
ում՝ ձեռին որ էր՝ յաւիտեան չախտի արտասուի  
նրա համար:

Էս լաւ իմացած եղիք, եղբայր, եւ ուրախ կացիք:

Բացարձակ լուռթիւնն է միայն. որ պսակում է՝  
երգի կատարելութիւնը:

Կեանքը ոսկեղէն սուերները սուգեւելու համար՝  
թերւում է արեւմուտք:

Ոէքն էլ, արցունքների երկինքը համբառնալու  
համար՝ պէտք է թողնի իր խաղերն ու սպառի բոլոր  
տանջանքը:

Էս լաւ իմացած եղիք, եղբայր, եւ ուրախ  
կացիք:

Մենք բոլորս էլ շտապում ենք ծաղիկներ քա-  
ղելու՝ որ սլացող քամին նրանց չտանի:

Ու մեր արիւնը ետում է ուժգին՝ աչքերը փայ-  
լատակում են — երբ մենք քաղում ենք էն համբոյր-  
ները. որ ախտի կորչէին, եթէ յապաղէինք:

Ազատ, անհամբեր է մեր կեանքը, բուն են ցանկութիւնները, որովհետեւ ժամանակը զարկում է զանգերն յառաջընթացման:

Էս լաւ իմացած եղիք, եղբայր, եւ ուրախ կացիք:

Մենք էնքան ժամանակ էլ չենք ունենում, որ մի բան բռնենք, աւարտենք ու թողնենք աշխարհում:

Ժամերն իրենց ցնորքները փէշերի տակ թաքցրած գաղտնագողի անցնում են ճնալով:

Կարժ է մեր կեանքը, ընկեր, մի քանի օր է նա տուել սիրոյ համար:

Իսկ եթէ տւած լինէր էդ օրերը տանջանքին ու աշխատանքին՝ կեանքն անվերջ կերկարէր:

Էս լաւ իմացած եղիք, եղբայր, եւ ուրախ կացիք:

Գեղեցկութիւնը մեզ սիրելի է ու դուրեկան, որովհետեւ նա էլ է պարում՝ նոյն փութանցիկ նւագի եղանակով՝ ինչպէս մեր կեանքը:

Գիտութիւնը բաղձալի է մեզ միայն նրա համար, որ մենք երբէք ժամանակ չենք ունենալու լրիւ տիրապետելու նրան:

Ամեն ինչ կատարել է, ամեն ինչ վերջացել է նախայաւիտեան Երկնքում:

Բայց երկրի խաբուսիկ պատրանքների ծաղիկներին մահն է միայն յաւերժ թարմութիւն շնորհում:

Էս լաւ իմացած եղիք, եղբայր, եւ ուրախ կացիք:

LXIX

Ես հալածում եմ ոսկի եղնիկին: Դուք ծիծաղեցէք, ընկերներ, իսկ ես կ'սլանամ տեսիլքի ետեւից, որ խուսափում է ինձնից, փախչում:

Ես վազում եմ սարերով ու ձորերով, թափառում իմ անամունն վայրերում — ես քշում եմ ոսկի եղնիկին:

Դուք գնում էք շուկայ ու մթերքներով ծանրաբեռնւած տուն վերադառնում. իսկ ես տարւեցի անտուն քամիների հմայքով նրբ եւ հրտեղ — չգիտեմ:

Սրտումս ոչ մի հոգս չկայ եւ ունեցածն էլ թողել եմ ետեւ: Ես վազում եմ սարերով ու ձորերով, թափառում եմ անամունն վայրերում. ես հալածում եմ ոսկի եղնիկին:

LXX

Ես յիշում եմ մանկութեանս մի օրը:

Թղթէ նաւակ էի բաց թողնում առում:

Յուզիսեան խոնար օր էր. մնակ էի ես էնտեղ ու երջանիկ իմ խաղով:

Ես թղթէ նաւակս բաց թողի առում:

Յանկարծ մնայլ ամպերը կուտակւեցին, քամին ելաւ փոթորկաբեր ուժգնութեամբ ու սելաւ թափւեց երկնքից:

Պղտոր ջրերը խառնւեցին առին, առուն ուռաւ, վարարեց ու խորտակւեց իմ նաւակը:

Վշտացած ինքս ինձ միտք էի անում՝ թէ փոթորիկը դիտմամբ սաստկացաւ, որ կործանի իմ բախտը — թէ՛ նրա ամբողջ շարունօթիւնն ուղղւած էր իմ դէմ:

Յուլիսի թխալոտ երկանք օր է էսօր, իսկ ես, ես մէկիկ մէկիկ յիշում եմ կեանքի էն խաղերը, որ տանուլ եմ տւել:

Անհծում եմ բախտս իր շար հանաքների համար — երբ յանկարծ յիշում եմ իմ թղթէ նաւակը, որ խորտակւեց առում:

LXXI

Օրը դեռ չի վերջացել ու շուկան չի փակւել շուկան գետի եզերքին:

Ես կարծում էի, որ իմ ժամանակը մեղքերէ եմ ու կորցրել ամեն ինչ՝ մինչեւ վերջին կոպէկը:

Բայց ոչ, եղբայր իմ, դեռ ես էլի բան ունեմ: Բախտն ինձ միանգամից չի կողոպտել:

Առուտուրը վերջացաւ:

Երկու կողմից էլ հաշիւները մաքրեցին ու հիմա ժամանակ է, որ ես տուն գնամ:

Հը, դժնապան, հմրկ ես պահանջում ինձնից:

Մի վախի, ես էլի բան ունեմ: Բախտն ինձ միանգամից չի կողոպտել:

Քամու օրօրը փոթորկով է սպառնում եւ արեւ-  
մուտքում կուտակուող ամպերը լաւ քան շին գուշակում:

Խաղաղ ջրերը սպասում են քամուն:

Շտապում եմ անցնել գետը՝ քանի զիշերը վրայ  
չի հասել:

Հը, լաստավար, քեզ պէտք է վճարեմ:

Աո, եղբայրս, դեռ էլի քան է մնացել մօտս:  
Բախտն ինձնից բոլորը չի ելել:

Ծամփու կողքին, ծառի տակ նստած է մուրաց-  
կանը: Աւանդ, նա երկչոտ յոյսով նայում է դէմքիս:

Նա կարծում է, թէ էսօրւայ աշխատանքով ես  
հարստացել եմ:

Այո, իմ եղբայր, մի քան դեռ մնացել է: Բախտն  
ինձնից բոլորը չի ելել:

Գիշերն ակելի է մթնում, ծամփան դատարկում  
է: Լուսատիկներն առկայծում են թփերում:

Ո՞վ ես դու, որ յամբընթաց գաղտնագողի հե-  
տեւում ես ինձ:

Գիտեմ, գիտեմ — դու ուզում ես յափշտակել  
իմ ձեռք բերած աշխատանքս: Ես քեզ չեմ յուսա-  
խաքի:

Որովհետեւ դեռ էլի քան ունեմ ես: Բախտն  
ինձնից բոլորը չի ելել:

Կէս զիշերին տուն եմ գալիս դատարկ ձեռ-  
ներով:

Անքուն ու տազնապալի աչքերով դու անհամ-  
բեր սպասում ես ինձ իմ դռան մօտ:

Երկչոտ թռչունի պէս դու գիտես ես ընկնում  
կըքոտ, անզուսպ սիրով:

Ա՛խ, Աստուծ, այո, այո, ես դեռ շատ քան  
ունեմ:

Բախտն ինձ միանգամեց չ'կողոպտեց:



LXXII

Տաժանելի երկունքի օրերով ես շինեցի իմ տա-  
ժարը՝ անդուռ եւ անպատուհան: Հաստ պատերը շար-  
ւած էին անագին քարերից:

Ես ամեն ինչ մոռացայ. ես փախայ աշխարհից:  
Հմայած հայեացքով դիտում էի էն կոթողը, որ ես  
կերտել էի բեմի վրայ:

Գիշեր էր միշտ տաժարում, միայն կանթեղներն  
էին այրում խնկաբոյր իւղով:

Կնդրուկի անվերջ ծուխն իր ծանր մշի օղակ-  
ներով կաշկանդում էր իմ սիրտը:

Գիշեր ցերեկ անբուն ես տաժարի պատերին  
փորագրեցի մոռացածին սքանչելի ծելեր — խառն ու  
առեղծւածային նախշերով — թեւաւոր ծիւր, ծաղիկներ  
մարդու դէմքով, կանայք օծի մարմնով:

Ոչ մի երթիկ չկար, որով ներս մտնէր սաւոցը  
տերեւների, երզը թռչունների կամ աղմուկն աշխա-  
տող գիւղի:

Միակ ծայնը, որ լսում էր մոայլ գմբեթի տակ,  
դա իմ նրզած շարականներն էին:

Իմ միտքը դարձաւ նուրբ ու խաղաղ, ինչպէս  
բարակ բոցն ու զգացումներս հանգան՝ ցատումները  
սուզւեցին:

Զգիտէի՝ ինչպէս էր ժամանակն անցնում, մին-  
չեւ որ շանթահար կայծակը երկնքից զարկեց տաժարին  
ու ցան ընկաւ սիրտս:

Կանթեղները կարծես ամաչեցին ու գունատեցին, իսկ պատերի նախշերը՝ շղթայւած երագների նման — ասլած աչքերով դիմաւորեցին լոյսը՝ կարծես չհասցրին ժամանակին թարնել:

Նս նայեցի բեմի կոթողին: Նկատեցի, որ նս ժպտում է — շունչ առնելով Աստծոյ կենսատու շփոմից:

Ու գիշերը, որ ես քանտարկել էի, թափ տեցիր թեւերն ու չքացաւ:

### LXXIII

Դոյզ են քո հարստութիւնները, իմ համբերատար, արջնաթոյր Մայր Երկիր:

Դու աշխատում ես կշտացնել բոլոր մանուկներին, բայց կերակուրդ քո նւազ է:

Կիսատ են քո մեզ պարգեւած ուրախութիւնները:

Ու դիմացկուն չեն մանուկներին համար քո վարպետօրէն ստեղծած խաղալիքները:

Դու չես կարող յազեցնել մեր ագահ յոյսերը՝ բայց մի՞թէ ես դրա համար քեզ կ'ծգեմ:

Բո ժպիտը թախծապարուր դուրեկան է աչերիս:

Բո սէրը, որ սահման չի ծանաչում, սիրելի է սրտիս:

Քո կրօնքից, որով դու մեզ կերակրում ես, կեանք է հոսում եւ ոչ անմահութիւն — դրա համար էլ դու երբէք չես փակում աչքերդ:

Դարեր է արդէն ինչ դու ստեղծում ես եւ գոյնեցող, եւ երգերով, սակայն քո դրախտը դեռ չի գոյացել. կերտել ես միայն նրա տխուր նմանութիւնը:

Քո ամենահրաշագեղ արարչութեանց վրայ իջել է բոցն արցունքների:

Ես կատրօնեմ քո լուռ հոգին իմ երգերով, իմ զգացումներս կ'ծուլեմ քո սիրոյ հետ:

Ես կերկրազանգեմ քեզ տանջանքիս ժամին:

Ծանաչեցի քո պայծառ դէմքը ու սիրում եմ քո լքւած ու տխուր ածիւնը, ո՛վ Մայր Երկիր:

## LXXIV

Տիեզերքի հանդիսաւոր ապարանքներում դաշտի հասարակ սէզը բազմած է միեւնոյն գորգի վրայ՝ արեւի շողերի ու գիշերայ աստղերի հետ միասին:

Ծիշտ էդպէս էլ իմ տաղերն անտառների ու ամպերի երգի հետ միասին տեղ ունեն տիեզերքի սրտում:

Իսկ դու, հարստութիւնների տէր, քո զանձերը մաս չունեն ոսկով շառափող արեւի ու երազող լուսնի քնքոյշ փայլի էն շնչին, անմող մեծութիւնից:

Քեզ չի դիպչելու օրհնանքն ամենակալ երկնքի:

Եւ երբ մահը գալիս է՝ զանձերդ գունատում ես, թառամում ու փոշի դառնում:

LXXV

Կէս զիշերին ծգնաւոր դառնալ ցամկացողը  
խօսեց՝

Հասել է ժամը, որ ես թողնեմ տունս ու գնամ  
փնտրեմ Աստուծոն: Ա՛խ, ո՞վ էր էսքան ժամանակ ինձ  
պահում էստեղ՝ մոլորութեան մէջ:

— Ես, շնչաց Աստուած, բայց մարդու ականջ-  
ները չ'լսեցին: Անկողնի մի կողքին խաղաղ պառկած  
էր կինը քնած մանուկը ծոցին:

— Ո՞վ ես դու, որ էսքան ժամանակ ինձ յիմա-  
րացրիր ու խաբեցիր — ասաց մարդը: Ու կրկին լսեց՝  
«Աստուած», բայց մարդը չ'իմացաւ:

Յանկարծ երեխան լաց եղաւ քնի մէջ ու աւելի  
մօտեցաւ մօրը:

Եւ հրամայեց Աստուած՝ «Սպասիր, պանդուր, մի՛  
թողնի քս տունը», նա կրկին չ'լսեց:

Ու դառնօրէն հարաչեց Աստուած՝

— Ի՞նչու է ինձ թողնում իմ ստրուկն ու գնում  
ինձ փնտրելու:

LXXVI

Ծոռում էր շուկան տաճարի առաջ:

Վաղ առաւօտից անձրել էր գալիս ու օրը մօտենում էր վախճանին:

Ամբոխի հրձանքից էլ արեւի զարթ էն փոքրիկ աղջկայ պայծառ ժպիտն էր, որ մի կողէկով արմաւի տերեւից շինած սուլիչ էր գնել:

Սուլիչի զիւ շուտը ծախքում էր ժխորի մէջ ու խլացնում ամբոխի քրքիջն ու աղմուկը:

Ռազմութիւնն իրար էր գալիս ու մարդիկ անդադար հրում էին միմեանց: Ծամբան կորել էր ցեխի մէջ, գետը փարարել եւ անընդհատ սելաւից դաշտը ծածկել էր ջրով:

Ամբոխի հոգսերից էլ արեւի ծանր էն փոքրիկ տղայի վիշտն էր, որ մի գոռշ շունէր՝ նախշուն ծեռնափայտ գնելու:

Նրա մտածկոտ աչքերը կարօտով նայում էին խանութին ու մարդկանց էս հսկայ բազմութիւնը դարձնում էնքան խնդ ու ողորմելի:

LXXVII

Արեւմուտքի երկրներից եկած բանւորն իր կնոջ  
հետ եռամսէով փոքոււմ էր գետինը՝ թոնիք շինելու  
համար:

Նրանց փոքրիկ աղջիկն ամեն օր գետափն էր  
գնում. նա էստեղ թաս ու պղինձ էր լւանում շա-  
րունակ:

Պատիկ եղբայրը՝ թխադէմ, տկտր, գլուխն  
ածիլած, ոտն ու ձեռքը ցլտոտ — ամեն անգամ գնում  
էր իր քրոջ հետ ու համբերութեամբ սպասում էր նրան  
էն թմբի վրայ, ուր քոյրը կասէր:

Ընտանեկան հոգսերի ծանր պարտականու-  
թեամբ տարւած իր մօր պարկեշտ օգնականունհին տուն  
էր գալիս լիքը կուժը գլխին, ձախ ձեռին պսպղուն  
պղինձը, աջով երեկային բռնած:

Մի օր էս տեսայ էս տկտր պատիկին նստած  
ոտները մեկնած:

Քոյրը շօի մէջ աւազով քերում էր կուժը  
պտտելով իր ձեռքում:

Ափի մօտ արածում էր մի փափկաբուրդ  
գառնուկ:

Նա մօտեցաւ էն տեղին, որտեղ նստած էր  
պատիկն ու յանկարծ բարձր ձայնով մայեց:

Պատիկը վեր թուաւ ու ծշաց:

Քոյրը թողեց ամաններն ու վազեց եղբօր մօտ:

Նա մի ձեռքով խտտեց եղբօրը, միւսով գառ-  
նուկն ու, բաժանելով նրանց իր փաղարջանքները,  
սիրոյ հանուր օղակով միացրեց կենդանուն ու մարդուն

LXXVIII

Մայիսին էր: Տօթ օրը թուում էր անվերջ  
երկար:

Արեգը տաք գետինը ծնդբուում էր ծարաւից:

Մէկ էլ լսեցի գետափից կանչող մի ձայն —  
«Ե՛կ, սիրելիս»:

Փակեցի գեղքս ու բաց արի պատուհանս՝  
որ տեսնեմ:

Մի անագին գոմէշ՝ ցեխի մէջ կորած, համբերա-  
տար ու հանգիստ աչքերով ու մի տղայ, մինչ ծնկները  
ջրի մէջ, կանչում էր նրան՝ իր հետ տղանայ:

Ժպտացի ցաւակցօրէն ու ինչ որ քաղցր հրճանք  
զգացի իմ սրտում:

LXXIX

Ես յաճախ միտք եմ անում ինքս ինձ՝ որտեղ  
է թաքնւած մարդու եւ անլեզու անասունի իրար հաս-  
կանալու սահմանը:

Արարչութեան հեռաւոր արշալոյսի ո՞ր նախնա-  
կան դրախտով էր անցնում էն սովորական նեղ ծամ-  
բան, որով նրանց սրտերն այցելեցին իրար:

Նրանց մշտական քայլերի հետքը ծամբու վրայ  
դեռ չի կորել՝ թէպէտ եւ վաղուց է մոռացւած ազգակ-  
ցութիւնը նրանց:

Բայց մինչեւ օրս էլ, երբեմն, որեւ է երկնային  
անխօս երաժշտութեան մէջ յանկարծ զարթնում է էն

մշուշապատ յիշողութիւնն ու անասունը ընթոյշ հաւատով մարդու աչքերին է նայում, մարդն էլ նրա աչքերին՝ իրեն զւարճացնող սիրով:

Ասկս երկու դիմակաւոր ընկեր հանդիպում են իրար ու մտաւորապէս ծանաչում միմեանց դիմակի տակից:

LXXX

Քո մի հայեացքով, ո՞վ հրաշագեղ կին, դու կարող էիր բանաստեղծների ընտրից սրգերի բոլոր գանձերը շորթել:

Բայց դու անլուր ես փառաբանութեանը՝ դրա համար էլ ես երգում եմ քեզ:

Դու կարող էիր աշխարհիս բոլոր հպարտ, դիտաւայծաւ գլուխները քո ոտերիդ մօտ ժողովել:

Բայց դու ընտրում ես միայն քո սիրածներին՝ փառքին անձանօթ-որ նրանց երկրպագես, դրա համար էլ ես երկրպագում եմ քեզ:



Քո ամենակատար ձեռներին շօշափումս ար-  
քայական փառքին իսկ կարող էր փայլ տալ:

Բայց դու նրանցով փոշի ես մաքրում ու կա-  
հաւորում քո համեստ տունը՝ դրա համար էլ ես ակնա-  
ծում եմ քեզնից:

LXXXI

Ի նչ ես էդպէս կամաց շշնում ականջիս,  
Օ, Մահ, իմ Մահ:

Իրիկնաղէմին, երբ ծաղիկները յոգնած կախ են  
զցում իրենց զլուխներն ու նախիրը տուն է դառնում  
արօտից՝ ինչու ես թարուն գալիս ինձ մօտ ու շշնում  
ես խօսքեր, որ ես չեմ հասկանում:

Եդպէս պիտի դու ինձ հետ պսակես:

Սառը համբոյրների ու մեղմ շշուկների քնեցնող  
հաշիշով ես ուզում ինձ յաղթել, Օ, Մահ, իմ Մահ:

Միթէ հանդիսաւոր ինձոյք չենք ունենալու մեր  
հարսանիքին:

Ու պսակ չնս դնիք քո սկէկուտ գոռզ մագերիդ:

Միթէ ոչ որ չի ընթանայ առջեւից քո դրօշակով  
ու միթէ գեշերը չի բոցավառի քո հրակարմիր ջահե-  
րից, Օ, Մահ, իմ Մահ:

Ե՛կ յաղթականօրէն, հանդիսաւոր թող հնչեն  
փողերը ծովի, նկ անքուն գիշերին:

Հագցրո՛ւ ինձ հիրիկ հագուստը, սգիւ վրաս ծի-  
րանի ծածկոցն ու բռնիքն ձեռքիցս, տա՛ր ինձ:

Թող քո կարքը կանգնած լինի իմ դռան մօտ ու  
ծիւանքը խրինջան անհամբեր:

Բարբրացրո՛ւ իմ ծածկոցն ու հպարտ նայիր իմ  
դէմքին, Օ, Մահ, իմ Մահ:

LXXXII

Մենք էս գիշեր մահ ենք խաղալու՝ իմ նշա-  
նածն ու ես:

Սեւ է գիշերը, կամշոտ են ամպերն երկնքում  
ու զազազած ալիքները ծովում:

Մենք թողինք մեր երազների անկողները, բաց  
արինք դռներն ու դուրս եկանք՝ իմ նշանածն ու ես:  
Նստեցինք ծօծում ու բարկ քամիները մեզ  
հրում էին ետեւից ու ժգնութեամբ:

Վայելքից ու երկիւղից իմ նշանածը թռչկոտ ում  
էր, դողում ու սեղմում էր կրծքիս:

Ես երկար ծառայեցի նրան գուրգուրանքով:  
Ժողիկներից անկողին շինեցի նրա համար ու  
դռները փակ ցի, որ ուժեղ լոյսն աչքերին չընկնի:

Ես մեղմ զգուշութեամբ համբուրում էի նրա  
շուրթերն ու ականջին շշնջում քնքոյշ խօսքեր՝ մինչև  
որ խոնջացած՝ բոլորովին թուլացաւ:

Նա մութ քնքշութեան անսահման մշուշն  
ընկղմեց:

Իմ զգեսներին չէր պատասխանում. իմ  
երգերն իսկ չկարողացան արթնացնել նրան:

Էն գիշերը վայրէ՛ անապատից փոթորկի կանչը  
հասաւ մեր ականջին:

Իմ նշանածը ցնցեց ու վեր թռաւ. սեղմեց իմ  
ծնոքն ու դուրս գնաց:

Քամին ծփում էր նրա վարսերը, ծածանում  
ծածկոցն ու սօսափում կրծքի ծաղիկ հիւսկէն:

Մահի հարւածը նրան դէպի կեանք մղեց:

Մենք կանգնած ենք դէմ առ դէմ, սիրտ առ  
սիրտ՝ իմ նշանածն ու ես:

LXXXIII

Նա ապրում էր սիմֆոնորի արտի ծայրին՝ բլրի  
հովտում -- դարեւոր ծառերի հանդիսաւոր սուտերների  
արանքից վազող աղբիւրի մօտ: Կանայք յաճախ գալիս  
էին իրենց կփերը ցնծուր, ծամբորդները սիրում էին  
էնտեղ հանգստանալ ու զրուցել:

Նա ապրում էր էնտեղ. աշխատում էր ու երա-  
զում զանգակ աղբիւրի կարկաչի տակ:

Մի օր. իրիկնադէմին, ամպերով ծածկւած սարի  
կատարից մի օտարական իջաւ: Նրա գուռ մագերը  
խոնւած էին քնած օձերի նման: Մենք զարմացած  
հարցրինք՝ «Ո՞վ ես դու,» բայց նա չպատասխանեց ու

նստեց զուլալ աղբիւրի մօտ՝ դիտելով էն խրճիթը,  
որտեղ նա էր ապրում: Ահից մեր սիրտը դողաց ու  
մինչև գիշերը վրայ չհասաւ՝ տուն չգնացինք:

Առաւօտը, երբ կանայք դէօդարի ծառերի տակ  
կարկաչող աղբիւրն եկան ջրի՝ նկատեցին, որ նրա  
խրճիթի դուռը բաց է, իսկ ինքը տանը չէ: Ո՞ւր էր նա  
քնքոյշ ժպիտն երեսին:

Դատարկ կուժն ընկած էր գետնին ու ծրագն  
ինքն իրեն այրել էր անկիւնում: Ոչ ոք չգիտէր՝ ուր է  
գնացել նա. անհետացել էր եւ օտարականը:

Մայիսին արեւը տարացաւ ու ծինը հաւեց:  
Մենք նստել էինք աղբիւրի մօտ ու լաց էինք լինում:  
Մենք ուզում էինք իմանալ՝ «աղբիւր կայ էն երկրում»,  
ուր նա գնացել է, կարո՞ղ է լցնել իր կուժն էս շոգ,  
ծարաւ օրեւին:» Ու վախեցած հարցնում էինք իրար  
«եւ էս մեր դիմացի սարերի ետեւում կայ արդ՞՞օք  
որեւէ աշխարհ:»

Ամառայ գիշեր էր: Թեթեւ քամին փչում էր  
հարաւից. նա նստած էի նրա դատարկ սննեակում,  
որտեղ ծրագը դեռ չէր վառւած: Յանկարծ սարերը

չբացան իմ աչքից՝ կարծես վարագոյր բացւեց: «Ախ,  
դա նա է գալիս: Դ՞նչպէս ես, բաւաս, երջանիկ ես:  
Դ՞նչպէս դու անկիւն գտար էստեղ՝ բաց երկնքի տակ:  
Ափսոս, մեր աղբիւրն էլ էստեղ չի, որ քո ծա-  
րաւը կտրի:»

«Նոյն երկինքն է եւ էստեղ, ասաց նա —  
միայն ազատ ամպերնո՞ լեռներից, նոյն աղբիւրն է,  
որ գետ է դարձել եւ հէնց նոյն գետինն է, որ ընդար-  
ձակել է հարթավայրի պէս:

«Էստեղ ամէն ինչ կայ, հառաչեցի ես — միայն  
մենք ենք պակաս:» Նա տխրութեամբ ժպտաց՝ «Դուք  
իմ սրտումն էք:» Ծս զարթնեցի ու լսեցի աղբիւրի  
կարկաչն ու դէօդարի սուսափինը գեշերով:

LXXXIV

Բրնձի կանաչ ու դեղին արտերի վրայով սլա-  
նում են քամուց հալածւած ստւերնեքն աշնան ամազերի,  
արեն էլ վազում է նրանց ետեւից:

Մեղուները մոռացել են մեղր ժողովելու մասին,  
լոյսից հարբած նրանք խոնուում են խելազար ու  
աղմկում:

Գետի կղզիների բազերն ուրախութիւնից ծշում  
են ամեն մի դատարկ բանի վրայ:

Տուն շճնանք էսօր, եղբայրներ, թող ոչ ոք  
գործի չերթայ:

Եկէք զրոհ տանք դէպի կապոյտ երկնքի բար-  
ձունքներն ու վազելով կլանենք, յափշտակենք տարա-  
ծութիւնը:

Շողում է, ծախրում՝ ծիծաղն օդում՝ ասես  
փրփուր ւնի ջրի հոսանքում:

Եկէք, եղբայրներ, առաւօտն անց կացնենք ան-  
միտ ու դատարկ երգերով:

LXXXV

Ո՛վ ես դու, ընթերցող, որ հարիւր տարի յետոյ  
պիտի կարդաս իմ երգերը:

Գարունքի էս փարթամ՝ շքեղութիւնից քեզ ոչ  
մի ծաղիկ չեմ՝ կարող ուղարկել, ոչ էլ մի հատիկ ոսկի  
շող էս ամպերից:

Բանց քո դուռն ու դիտիր հեռուն:

Էր փթթող պարտիզում հաւաքիւր անուշաքոյր  
յիշողութիւններ էն ծաղկանց մասին, որ թոռմել են  
հարիւր տարի առաջ:

Ու երանի թէ զգայիր հոգուդ ուրախութեան  
մէջ էն կենսաւի բերկրանքը, որն երգեց մի գարնան  
առաւօտ՝ դրկելով իր հրճաւի ձայնը հարիւր տարի-  
ների միջից:

3 Ա Ն Կ

|   |            |
|---|------------|
| Ազատիս ինձ, սիրելիս . . . . .           | XLVIII— 95 |
| Ա՛խ, երգիչ, տէս, երեկոն . . . . .       | II— 4      |
| Ամբողջ առաւօտն ուզում եմ . . . . .      | XXXIX— 75  |
| Ամեն օր նա գալիս է . . . . .            | XX— 43     |
| Ասա՛ ինձ, սիրելիս . . . . .             | XXIX— 57   |
| Արեւմուտքի երկրներից եկած բանւորն       | LXXVII—150 |
| Բռնել եմ նրա ձեռներն . . . . .          | XLIX— 96   |
| Բրնձի կանաչ ու դեղին արտերի վրայով      | LXXXIV—164 |
| Գիշերը՝ երբ ես մենակ գնում եմ . . . . . | IX— 19     |
| Դէ, վերջացրու վերջին երգը... . . . .    | LI— 98     |
| Դոյզ են քո հարստութիւնները... . . . .   | LXXIII—143 |

|                                      | Եր     | Էջ  |
|--------------------------------------|--------|-----|
| Դու անցնում էիր գետափնեայ շաւիղով    | XIX—   | 41  |
| Դու ինձ հետ խաղ ես անում... . . .    | XXXV—  | 67  |
| Դու իրիկայ ամպ ես... . . . . .       | XXX—   | 59  |
| Դու ոչ միայն Աստու . . . . .         | LIX—   | 112 |
| Եթէ օրայ հոգսերիդ ժամին... . . .     | XII—   | 26  |
| Ե՛կ, ինչպէս որ կաս... . . . . .      | XI—    | 23  |
| Եռում էր շուկան տաճարի առաջ — .      | LXXVI— | 148 |
| Ես անցկացրի օրս արևիկէզ... . . .     | LXIV—  | 120 |
| Ես զարթնեցի այգուն կանուխ... . .     | VIII—  | 17  |
| Ես ինչպէս կարող եմ էս առաւօտ . . .   | VII—   | 15  |
| Ես հալածում եմ ոսկի նշնիկին... . .   | LXIX—  | 134 |
| Ես հանդիստ չունիմ... . . . . .       | V—     | 11  |
| Ես մէկն էի էն բազմաթիւ կանանցից... . | LVI—   | 108 |
| Ես յաճախ միտք եմ անում... . . .      | LXXIX— | 152 |
| Ես յիշում եմ մանկութեանս մի օրը —    | LXX—   | 135 |
| Ես ոչինչ չիմողրեցի... . . . . .      | XIII—  | 29  |

|   | Եր       | Էջ  |
|---|----------|-----|
| Ես բաղնիցի քո ծառիկը, ո՞վ կեանք — .                   | LVII—    | 110 |
| Երբ զալիս եմ... . . . . .                             | XL—      | 77  |
| Երբ երկու քոյր գնում են ջրի... . . .                  | XVIII—   | 39  |
| Երբ նա շտապ քայլերով... . . . . .                     | XXII—    | 45  |
| Երգում է դեղին թռչունը... . . . . .                   | XVII—    | 36  |
| Ե՛յ, նեղւո՛ւ, թունդ հարբած կոնձաբան —                 | XLII—    | 82  |
| Թախիճն է պատել հարցական աշերիդ... .                   | XXVIII—  | 55  |
| Թէպէտ եւ կէսօրն անց էր... . . . . .                   | XIV—     | 31  |
| Թէպէտ եւ սահուն քայլերով զիշերն է<br>իջնում . . . . . | LXVII—   | 127 |
| Թող զործը, հարս, տես... . . . . .                     | X—       | 21  |
| Թուկով ժամանակով քո սօգտը . . . . .                   | XXXVIII— | 73  |
| Ի՞՞մ վիզն ես ուզում զարդարել... . . .                 | XXXVII—  | 71  |
| Ինձ ոչինչ չասած՝ մի՛ գնա, սիրելիս —                   | XXXIV—   | 66  |
| Ի՞նչ ես էդպէս կամաց շշնում... . . .                   | LXXXI—   | 157 |
| Ի՞նչ ես նստել էստեղ... . . . . .                      | XXIII—   | 46  |



|  | ԵԷ          |
|--|-------------|
| Ինչ է մտածել էս պատանի օտարա-<br>կանը... . . . . .               | XXI— 44     |
| Ինչո՞ւ ես դու էդպէս նայում... . . . .                            | LIII—100    |
| Ինչո՞ւ հանգաւ ծրագը — . . . . .                                  | LII— 99     |
| Լիւռ, սիրտ իմ... . . . . .                                       | LXI—114     |
| Կեանքի ժխորի ու աղմուկի մէջ... . .                               | LX—113      |
| Կէս գիշերին ծգնաւոր դառնալ... . .                                | LXXV—146    |
| Կէսօր էր, երբ դու գնացիր — . . . .                               | LV—105      |
| Չգեցիր ինձ ու գնացիր քու ժամքով —                                | XLVI— 91    |
| Չեոները դիպչում են ձեռներին... . .                               | XVI— 34     |
| Ճամբայ ընկնող հիւրերին... . . . .                                | XLV— 90     |
| Ճամբորդ, դու մեկնելո՞ւ ես — . . . .                              | LXIII—117   |
| Մայիսին էր: Տօթ օրը... . . . . .                                 | LXXVIII—152 |
| Մթնշաղկն՝ երազիս խաւար կածանով<br>գնում էի... . . . . .          | LXII—115    |
| Միայն ձեռքերիդ յօժարակամ պարգե-<br>ներն եմ վերցնում... . . . . . | XXXVI— 51   |

|  | ԵԸ          |
|--|-------------|
| Մի առաւօտ ուռկանս ծովը ձգեցի . . .     | III— 6      |
| Մի առաւօտ լոտոսի տերեւով... . . . .    | LVIII—111   |
| Մի խնթ թափառական . . . . .             | LXVI—124    |
| Մի ծածկիլ սրտիդ գաղտնիքը . . . . .     | XXIV— 48    |
| Մենք էս գիշեր մահ ենք խաղալու... .     | LXXXII—159  |
| Մ՛տ եկ, պատանի... . . . . .            | XXV— 49     |
| Նա ապրում էր սիմիոնի արտի . . . . .    | LXXXIII—161 |
| Նայիր, սիրելիս, շշջաց նա ինձ . . . .   | XXXVI— 69   |
| Ներքի, Արժանապատիւ Հայր... . . . .     | XLIV— 88    |
| Նորից քո ծայրն եմ ես լսում — . . . . . | LXV—122     |
| Ողորմած եղիք դէպի քո ծառան — . . .     | I— 1        |
| Ո՛չ ընկեցներ, ինչ ուզում էք ասէք... .  | XLIII— 86   |
| Ո՛չ որ ամմահ չէ, եղբայր... . . . . .   | LXVIII—130  |
| Ո՛վ ես դու, ըմբոցող... . . . . .       | LXXXV—166   |
| Ուզում եմ արտասանել քեզ համար... .     | XLI— 79     |
| Ո՛ր ես շտապում էս ուշ գիշերին . . . .  | LIV—103     |



հոս Ե՛

|  |            |
|--|------------|
| Պաշտիք սէրը, հաւատա նրան . . . . .                     | XXVII— 53  |
| Մանկակի վանդակում տանջում էր... . . . . .              | VI— 13     |
| Միրելիս, ասան, էդ բոլորը ճիշտ է - . . . . .            | XXXII— 62  |
| Միրում եմ քեզ, նազելիս... . . . . .                    | XXXIII— 64 |
| Միրոս՝ անքնակ մի թռչուն... . . . . .                   | XXXI— 61   |
| Միրոս, սիրելիս, օր ու գիշեր տնն<br>չում է... . . . . . | L— 97      |
| Վազում եմ՝ ինչպէս մթին ծմակում... . . . . .            | XV— 33     |
| Վայ ինձ, դրտեղ է տունս... . . . . .                    | IV— 8      |
| Տատանելի երկունքի օրերով... . . . . .                  | LXXII—140  |
| Տիեզերքի հանդիսաւոր ապարանքն-<br>քում . . . . .        | LXXIV—145  |
| Քանի որ դու էդպէս ես ուզում . . . . .                  | XLVII— 94  |
| Քո մի հայեացքով, սկ հրաշագեղ կին... . . . . .          | LXXX—155   |
| Օրը դեռ չի վերջացել... . . . . .                       | LXXI—137   |



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

Small handwritten mark or scribble.

Small handwritten mark or scribble.

«Ազգային գրադարան»



NL0303586

891.44

W-12